6857

1922р

059
0-83

# ՕՐԱՑՈՅՑ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ
## ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԵՒ

ՇԱՀԵԿԱՆ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐՈՎ

1922--ՌՅՀԱ

ԳԻՆ 30 ՍԷՆԹ

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ

ՊՈՍՏՈՆ

059
0-83

059
0-83



# 1922 ՕՐԱՑՈՅՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԵՒ
ՇԱՀԵԿԱՆ
ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐՈՎ.

**Ռ. Յ. Հ. Ա**

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ**
**ԵՒ ԲԱՐԻ ԿԱՂԱՆԴ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

6 1876-67



ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍ. ԱՆՎԱՆ
им А Мясникяна
106370-ԿԱ
61876-67
1194-2009

## ՏՈՄԱՐԻ ԲԱՆԱԼԻՆ

| | |
|---|---|
| Թուական Փրկչական | 1922. |
| Թուական Հայոց | ՌՅՀԱ. |
| Տարեգիր | Խ. |
| Եօթներեակ | Զ. |
| Վերադիր | ԺԳ. |
| Տանուտէր | ԱՑԾԵՂՁԻՒՐ |

## ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐ ԵՒ ՕՐԵՐ

Յնվր. 19. ԵՇ. ԾՆՈՒՆԴ (Ա. Տաղաւար):
Փետր. 5. ԿԻՐ. Բարեկենդան Առաջաւորաց:
Փետր. 26. ԿԻՐ. Բուն Բարեկենդան:
Ապրիլ 16. ԿԻՐ. Զատիկ (Բ. Տաղաւար):
Մայիս 14. ԿԻՐ. Երեւման Խաչ:
Մայիս 25. ԵՇ. Համբարձումն:
Յունիս 4. ԿԻՐ. Հոգեգալուստ:
Յունիս 25. ԿԻՐ. Բարեկենդան Լուսաւորչի:
Յուլիս 23. ԿԻՐ. ՎԱՐԴԱՎԱՌ (Գ. Տաղաւար):
Օգոստ. 27. ԿԻՐ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ (Դ. Տաղաւար):
Սեպտմբ. 24. ԿԻՐ. ԽԱՉ (Ե. Տաղաւար):
Հկտմբ. 1. ԿԻՐ. Բարեկենդան Ս. Գէորգայ:
Նյմբր. 5. ԿԻՐ. Գիւտ Խաչ:
Դկտմբ. 3. ԿԻՐ. Բարեկենդան Յիսնակաց:
Դկտմբր. 24. ԿԻՐ. Բարեկենդան Ս. Յակոբայ:

## ՏՕՆԱԿԱՆ ԿԱՄ ԿԻՐԱԿԻ ԲՌՆԵԼԻՔ ՕՐԵՐ

1· Կիրակիներ։
2· Ծննդեան Բ·րդ եւ Ը·րդ օրեր։
3· Վարդանանց Զօրավարաց տօնի օր։
4· Տեառնընդառաջ։
5· Աւագ Հինգշաբթի։
6· Զատկի Ա· Բ· Գ· օրեր։
7· Աւետման տօն։
8· Համբարձման տօն (ԵՇ·)։
9· Լուսաւորչի նշխարաց գիւտի օր (ՇԲ·)։
10· Վարդավառի ԲՇ·ին։
11· Աստուածածնի ԲՇ·ին։
12· Խաչի ԲՇ·ին։
13· Աստուածածնի Յղութեան, Ծննդեան եւ Ընծայման տօնի օրեր։
14· Թադէոս եւ Բարթողիմէոս Առաքելոց տօնի օրեր։

## ԱՆՇԱՐԺ ՏՕՆԵՐ ԱՄՍԱԹԻՒԵՐՈՎ

1· Յնվր· 5 (18), Ճրագալոյց Ծննդեան։
2· Յնվր· 6 (19), Ծնունդ։
3· Յնվր· 7-12 (20-25), Ծննդեան յաջորդ օրեր։
4· Յնվր· 13 (26), Անուանակոչութիւն։
5· Փետր· 14 (27), Տեառնընդառաջ։
6· Ապրիլ 7 (20), Աւետումն (Աստուածածնի)։
7· Սպտմ· 8 (21), Ծնունդն Ս· Աստուածածնի ի յԱննայէ։
8· Նոյմր· 21 (Դեկտ· 4) Ընծայումն Ս· Աս–
9· Դեկտ· 9 (22), Յղութիւն Ս· Աստուածածնի ի յԱննայէ։



## ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՕՆԵՐ

1· Յնվր· 1· Ամանոր, **New-Year's.**
2· Փետր· 12· Ծնունդ Լինքընի, **Lincoln's Birthday.**
3· Փետր· 22· Ծնունդ Վաշինկթընի, **Washington's Birthday.**
4· Մայիս 20· Գերեզմանատօնք, **Decoration Day.**
5· Յունիս 17· Տօն Պընքըր Բլրոյ, **Bunker Hill Day.**
6· Յուլիս 4· Տօն Անկախութեան, **Independence Day.**
7· Սպտմբր· 2· Վաստակատօնք, **Labor Day.**
8· Հկտմբր· 12· Գոլոմպոսեան տօնք, **Columbus Day.**
9· Նյմբր· 30· ԵՇ· Գոհաբանատօնք, **Thanksgiving Day.**
10· Դկտմբր· 25· Ծնունդ, **Christmas.**

## ԱՄԻՍՆԵՐ ԵՒ ՕՐԵՐ

Երսուն օր ունին Ապրիլ, Սեպտեմբեր,
Նոյնպէս եւ Յունիս, Նոյեմբեր·
Քսան ութ միայն ունի Փետրուար,
Մնացորդներն ալ՝ երսուն մէկ համար։
Thirty days has September,
April, June and November;
February has twenty-eight,
Thirty-one the other's rate.

## ՊՍԱԿԻ ՀԱՄԱՐ ԱՐԳԻԼԵԱԼ ՕՐԵՐ

1· *Բոլոր Կիրակիներ։*

2· *Բոլոր ԴՇ· եւ Ուր· օրեր։*

3· *Հինգ Տաղաւարներու երկրորդ օրեր։*

4· *Ծննդեան, Անուանակոչութեան, Տեառնընդառաջի, Աւետման եւ Համբարձման տօնից օրեր։*

5· *Բոլոր Մեծ Պահոց օրեր եւ Զատկի առաջին շաբաթը, այսինքն՝ Բուն Բարեկենդանէն մինչեւ Նոր Կիրակի։*

6· *Առաջաւորաց, Վարդավառի, Աստուածածնի Վերափոխման, Խաչվերացի, Յիսնակաց եւ Ծննդեան Շաբաթապահոց օրեր։*

—o—

*Կթեա կաթն՝ եւ եղիցի իւղ, ապա եթէ կարի ճմլեսցես զպտկունսն, ելանէ արիւն։*
*Է՛ ամօթ որ ածէ զմեղս, եւ է ամօթ որ ածէ զփառս եւ զշնորհս։*
*Հզօրն առ ամպարշտութեան խլրում զբռնարաէ զտնանքն։*
*Թագաւոր արդար՝ կանգնէ զաշխարհ, եւ այր անօրէն կործանէ։*
*Ոչ գտցի առաջնորդ ազգի անօրինի, իսկ որ պահէ զօրէնս՝ երանելի է։*



## ՊՍԱԿԻ ՀԱՄԱՐ ԹՈՅԼԱՏՐԵԱԼ ՕՐԵՐ

1· *Ծննդեան Ութօրէքին մէջ, Յնվր·* 8 (21)*էն մինչեւ* 12 (25), *հինգ օրեր։*
2· *Յնվր·* 14 (27)*էն մինչեւ Առաջաւորաց Բարեկենդան։*
3· *Առաջաւորաց ՇԲ· օրէն մինչեւ Բուն Բարեկենդան։*
4· *Յինանց մէջ, Նոր Կիրակիի ԲՇ·էն մինչեւ Վարդավառի Բարեկենդան։*
5· *Վարդավառի ԳՇ·էն մինչեւ Աստուածածնի Բարեկենդան։*
6· *Աստուածածնի Գշ·էն մինչեւ Խաչի Բարեկենդան։*
7· *Խաչի ԳՇ·էն մինչեւ Յիսնակաց Բարեկենդան։*
8· *Յիսնակաց ԲՇ·էն մինչեւ Ծննդեան Բարեկենդան։*

ԾԱՆՕԹ·— Եկեղեցական օրեր կ՚ըսկսին արեւու մարը մտնելէն ետքը· հետեւաբար Կիրակի երեկոները կարելի է պսակ ընել, եթէ յաջորդ օրը արգիլեալ չէ պսակի համար։

—«Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, եւ ես՝ աշխարհի»։ (Գաղտ· Զ· 14·)

*Որ սիրեն զօրէնս՝ պատեն զինքեամբք պարիսպ։*

ԶԱՅՆՔ ՍԱՂՄՈՍԱՑ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ ԵՒ ԱՂՕԹԻՑ ԳԻՇԵՐԱՊԱՇՏԱՄԱՆ ԵՒ ՄԱՂԹԱՆԱՑՆ, ԸՍՏ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ։

| Ձայնք | ԳԿ.—ԲԿ. | ԲՁ.—ԳՁ. | ԱԿ.—ԳԿ. | ԱՁ.—ԳՁ. |
|---|---|---|---|---|
| Սաղմոսք | Երանեալ և Իբրև | Ողորմեա՛ և ի Նեղութեան | Մի՛ նախանձիր և. խոստովան | Երկինք պատմեն և Տէր ապաւէն |
| Աւետարանք | ՄԱՏԹԷՈՍ | ՄԱՐԿՈՍ | ՂՈՒԿԱՍ | ՅՈՎՀԱՆՆԷՍ |
| Քարոզք | վասն ի վերուստ | վասն զտանելոյ | վասն ուղղելոյ | վասն ի գիշերի |
| Աղօթք | Տէ՛ր տունջեան | Գոհանամք զքէն | Տէ՛ր երկնի և երկրի | Ի գիշերի և ի տունջեան |
| Մաղթանք | Սաղմոսիւք | Գոհութեամբ | Յերգս օրհնութեան | Ի գիշերի և |



ԱՌԱՋԻԿԱՅ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐՈՒՆ ՕՐԵՐՆ ՈՒ ԱՄՍԱԹԻՒԵՐԸ

| ՏԱՐԻՆԵՐ | Տոմար Օրէր | Զատկ. Կերկ. Ճներ ըստ Արև. Տմրի. | Զատկ. Կերկ. Ճներ ըստ Արմ. Տմրի. | Վարդավառ. ԿԻՒՐ.ՆԵՐ | Աստ. ածնի ԿԻՒՐ.ՆԵՐ | Խաչի ԿԻՒՐ.ՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| 1921 ՌՅՀ | ԴԾ. | Ապրիլ 18—1Մ | Մարտ 27 | Օգոստոս 7 | Սեպտ. 25 | Նոյեմ. 6 |
| 1922 ՌՅՀԱ | ԵԾ. | Ապրիլ 3—16 | Ապրիլ 16 | Յուլիս 23 | Օգոստ. 27 | Սեպտ. 24 |
| 1923 ՌՅՀԲ | ՈՒՐ. | Մարտ 26—8 Ա. | Ապրիլ 1 | Յուլիս 15 | Օգոստ. 26 | Սեպտ. 30 |
| 1924 ՌՅՀԳ Նահանջ | ԾԲ. | Ապրիլ 14—27 | Ապրիլ 20 | Օգոստոս 3 | Օգոստ. 31 | Սեպտ. 28 |
| 1925 ՌՅՀԴ | ԲԾ. | Ապրիլ 6—19 | Ապրիլ 12 | Յուլիս 26 | Օգոստ. 30 | Սեպտ. 27 |

ԾԱՆՕԹ.—Հայոց Ծննդեան Տօնը ամսաթիւն է միշտ Յունուար 6—19։

## ԽԱՉԸ

Թէ պաշտումի թափն ունենաս՝
Տէրն զոյգ մը թեւ քեզի կուտայ,
Որպէս զի իր Ուժը անհաս
Սլացընես երկրի վրայ:
Թէ տեսիլներ ունենաս դուն՝
Յայտնութիւն մ'ալ քեզի կուտայ,
Որպէս զի իր Կամքը արթուն
Հանդիսացնես երկրի վրայ:
Թէ բարձունքէ մ'խօսիս իր հետ՝
Ինքը քեզի ձայն մը կուտայ,
Որպէս զի իր Խօսքը յաւէտ
Արձագանգես երկրի վրայ:
Թէ վերացած յառիս իրեն՝
Հուր լեզու մ'ալ քեզի կուտայ,
Որպէս զի ի՛ր Կայծը վերէն
Սահեցընես երկրի վրայ:
Եթէ մըտնես իր ամպին մէջ՝
Ինքը քեզի շանթ մը կուտայ,
Որպէս զի ի՛ր Վրէժը անշէջ
Փայլատակես երկրի վրայ:
Իսկ իր լոյսին թէ երթաս մօտ՝
Ինքը քեզի ջահ մը կուտայ,
Որպէս զի ի՛ր Փառքն անաղօտ,
Վարդավառես երկրի վրայ:
Երբ նետուիս իր գիրկն անուշ՝
Ինքը քեզի երգ մը կուտայ,
Որպէս զի ի՛ր Շնորհքն երկնայուշ
Թըրթըռացնես երկրի վրայ:
Թէ՛ համբուրուիս հետ իր վէրքին՝
Ինքը քեզի կեանք մը կուտայ,
Որպէս զի ի՛ր Շունչը անդին
Ոգեւորես երկրի վրայ:



Իսկ թէ թաղուիս իր շուքին տակ՝
Ինքը քեզի շող մը կուտայ,
Ոչինչին դէմ Յոյսին անփակ
Ճառագայթը երկրի վրայ:
Ու այդ Ուժը, այդ Կամք ու Խօսք,
Այդ Կայծն ու Վրէժ, այդ Փառքը սոսկ,
Այդ Շնորհն ու Շունչ, այդ Յոյսն համարն
Քեզի տըրուած ԽԱՉՆ է միայն:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

## ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Դարեր եկան, դարեր անցան Էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան, Էջմիածին,
Չես ձեռակերտ դու մարդկեղէն առօրեայ,
Դու շողակաթ, լուսոյ խորան, Էջմիածին:
Խաւարի մէջ դու վառեցար որպէս կանթեղ,
Վա՛ռ պահեցիր մեր սրտերում կայծն երկնային.
Անփառունակ ըստրուկ երկրի դու լուսադեղ
Անշէջ փարոս ազատութեան, Էջմիածին:
Ցրուած հօտի դու ժողովող անքայթ փարախ,
Հաստատ լինի թող մեզ վերայ քո հովանին.
Գրիգորի Սուրբ օրհնութեամբ ծաղկի՛ր խաղաղ,
Փա՛ռք, ապաւէն մեր աննըման Էջմիածին:

ՅՈՎՀ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



## ԱՄԱՆՈՐԻ ԻՂՁԵՐ

Խաչի՛դ մեռնիմ, Տէ՛ր իմ Յիսուս,
Ա՛լ հերիք են սեւ տարիներ...:
—Թող ՀԱՒԱՏՔԻ ժա՛մ մ'ըլլայ այս
Հայ սիրտերու սուրբ Միութեան:
Խաչի՛դ մեռնիմ, Տէ՛ր իմ Յիսուս,
Յաղթանակիդ այդ վեհ Դրօշին:
—Թող պինդ ՅՈՅՍՈՅ Օ՛ր մ'ըլլայ այս,
Փոքրիկ Հօտիդ Ազատութեան:
Խաչի՛դ մեռնիմ, Տէ՛ր իմ Յիսուս,
—Թող հուր ՍԻՐՈՅ Ա՛մ մ'ըլլայ այս
Հայ բուխերկին քո՛ւք ջերմութեան,
Լո՛յս շինութեան Հայու ժամուն:
Խաչի՛դ մեռնիմ, Տէ՛ր իմ Յիսուս,
Սեւ տարիներ, օրեր, ժամեր
Ա՛լ թող անցնին:— Ազգիս համար
Թող ՓՐԿՈՒԹԵԱՆ Դա՛ր մ'ըլլայ այս:

Բ. Ե.





Ջրհոս

ՅՈՒՆՎԱՐ (31 օր)

Գկ. 1. *ԿԻՐ. *Զօրրորդ՝ Ցինակաց: Հարց՝* ԳՁ. փառաւորեալ Որդի: *Հմբրձ.* Գկ. ՏԱՐԵՄՈՒՏ ԵՒ ԿԱՂԱՆԴ 1922 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ: Ըզ քո յարութիւնդ, *ա* Առեալ:

ԳՁ. 2. *ԲՃ. Տօն Սրբոց Հայրապետացն՝ Իգնատիոսի եւ Ադդէի, եւ Սրբոց Եպիսկոպոսացն Մարութայի եւ Թէոպոմպայ, եւ Թէոփնեայ Վկային եւ Չորից Զինուորացն՝ Բասոսի, Եւսեբի, Եւտիքի եւ Բասիլիդեայ:*

Գկ. 3. *ԳՃ. Տօն Սրբոյն Նախավկայ եւ անդրանիկ Թագաւորին Աբգարու:*

ԱՁ. 4. *ԴՃ. Պահք:— Երեկոյեան* Նախատօնակ:

ԱԿ. 5. *ԵՃ.* Սկիզբն Աւագ Տօնից:— *Ա. Տօն՝ Սրբոյն Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Առաքելոյն: Օրհ.՝* ԴՁ. Յաղթող գտաւ. *իր սարօքն:*

ԲՁ. 6. *ՈՒՐԲ. Պահք:— Երեկոյեան* Նախատօնակ:

ԲԿ. 7. *ՇԲ. Բ. Տօն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ Առաջին Մարտիրոսին:*

Օրհ.՝ Գ.Կ. Նախատակ բարի. *Իւր սարօքն*։

Դ.Ձ. 8. *Կիր. Հինգերորդ՝ Ցխնակաց։ Հարց՝* Գ.Կ. Նախայաւիտեան։ *Հմբրձ.* Գ.Կ. փառաւորեալ է քո յարութիւնդ. (*ցմերջն*)։ — *Երեկոյեան՝* Նախատօնակ։

Գ.Կ. 9. *ԲՇ. Գ. Տօն Սրբոց Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի։— Օրհ. Դ.Ձ.* Ցնծայ այսօր. *Իւր սարօքն։— Երեկոյեան* Նախատօնակ։

Դ.Ձ. 10. *ԳՇ. Դ. Տօն Սրբոց Որդւոցն Որոտման՝ Ցակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին։ Օրհ.՝ Դ.Կ.* Որ էնն յէութեան, *Իւր սարօքն*։

Դ.Կ. 11. *ԴՇ. Պահք։ Հարց՝ Դ.Կ. աղջ.* Օրհնեալ Տէր Աստուած Հարցն մերոց։ Բարեկենդան Ծննդեան։

Ա.Ձ. 12. *ԵՇ. Պահք*։

Ա.Կ. 13. *ՈՒՐԲ. Պահք*։

Բ.Ձ. 14. *ՇԲ. Պահք։— ՏԱՐԵՄՈՒՏ ԵՒ ԿԱՂԱՆԴ* 1922 *ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԸՍՏ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ*։

Բ.Կ. 15. *Կիր. Վեցերորդ՝ Ցխնակաց։ Պահք։ Հարց՝ Դ.Ձ.* Միածին որդի։ *Հմբրձ. Բ.Կ.* կանխեցին կանայքն (*ցմերջն*)։

Գ.Ձ. 16. *ԲՇ. Պահք։ Հարց՝ Գ.Կ.* Օրհնեալ Տէր Աստուած օրհնեալ։

Գ.Կ. 17. *ԳՇ. Պահք*։

Դ.Ձ. 18. *ԴՇ.* Ճրագալոյց Ծննդեան Քրիստոսի։

Դ.Կ. 19. *ԵՇ. *ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։ Տաղաւար։* Տօն Ութօրեայ։ *Միջոց ուտիք* 18 *օր*։



Ա.Ձ. 20. *ՈՒՐԲ. Բրդ. օր Ծննդեան ։ՄԵՌԵԼՈՑ։*

Ա.Կ. 21. *ՇԲ. Գրդ. օր Ծննդեան։*

Բ.Ձ. 22. *Կիր. Դրդ. օր Ծննդեան։*

Բ.Կ. 23. *ԲՇ. Երդ. օր Ծննդեան։*

Գ.Ձ. 24. *ԳՇ. Զրդ. օր Ծննդեան։*

Գ.Կ. 25. *ԴՇ. Էրդ. օր. Ծննդեան։*

Դ.Ձ. 26. *ԵՇ. Ըրդ. օր Ծննդեան եւ Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Դ.Կ. 27. *ՈՒՐԲ. Պահք։*

Ա.Ձ. 28. *ՇԲ. Տօն Ծննդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին։*

Ա.Կ. 29. *Կիր. Առաջին՝ զկնի Ութօրէից Ծննդեան։ Հարց՝* Դ.Ձ. Ծագումն Միածնի։

Բ.Ձ. 30. *ԲՇ. Տօն Սրբոցն Պետրոսի Հայրապետին, Վլասայ Եպսին. եւ Աբիողոմայ Սրկդին։*

Բ.Կ. 31. *ԳՇ. Տօն Սրբոյն Անտոնի, Տրփոնի, Պարսամայ եւ Ոնոփրիոսի Ճգնաւորացն։*

*—Յարգէ՛ Եկեղեցւոյդ եւ Ազգիդ Տօները։ Յիշէ՛ որ այդ Տօներուն դէմքերն ու դէպքերը հայեկան դիւցազնութեանց յիշատակներ են։ Հոգիդ պէտք չունի՞ այդ դիւցազնութեանց։*

*—Ազատամիտ եղիր։ Մոլեռանդութիւնը կ՛սպաննէ մաքի եւ խղճի ազատութիւնը։ Ինչպէս քաղաքական կարծիքներդ, նոյնպէս կրօնական համոզումներդ ամուր բռնէ. բայց յարգէ ուրիշներուն ալ քաղաքական կարծիքները եւ կրօնական համոզումները։*



Ձուկն

## ՓԵՏՐՎԱՐ (28 օր)

Գ.Ջ. 1. ԴՇ. Պահք։
Գ.Կ. 2. ԵՇ. Տօն Սրբոյն Թէոդոսի Թագաւորին եւ Մանկանցն Եփեսոսի։
Դ.Ջ. 3. ՈՒՐԲ. Պահք։
Դ.Կ. 4. ՇԲ. Տօն Սրբոց Հայրապետացն Աթանասի և Կիւրղի։
Ա.Ջ. 5. *ԿԻՐ. Երկրորդ՝ զկնի Ծննդեան։ Հարց՝ Դ.Ջ. փառաւորեալ։ Մեծ. Դ.Ջ. Ուրախացիր Աստուածածին վերօրհ.։ Բարեկենդան Առաջաւորաց։
Ա.Կ. 6. ԲՇ. Պահք։
Բ.Ջ. 7. ԳՇ. Պահք։
Գ.Ջ. 8. ԴՇ. Պահք։
Գ.Կ. 9. ԵՇ. Պահք։
Դ.Ջ. 10. ՈՒՐԲ. Պահք։ Յիշատակ Յովնանու Մարգարէին։
Դ.Կ. 11. ՇԲ. Տօն Սրբոյն Սարգսի Զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին, եւ Զօրեքտասան Զինուորացն։
Ա.Ջ. 12. *ԿԻՐ. Երրորդ՝ զկնի Ծննդեան։ Հարց՝ Դ.Կ. Անսկիզբն Բանդ։ Մեծ. Դ.Կ. Աստուածածին պայծառ։
Ա.Կ. 13. ԲՇ. Տօն Սրբոց Առավմեան Զօրավարացն։



Բ.Ջ. 14. ԳՇ. Տօն Սրբոց Սուքիասեանց Վկայիցն։
Բ.Կ. 15. ԴՇ. Պահք։
Գ.Ջ. 16. ԵՇ. Տօն Սրբոց Ոսկեանց Վկայիցն։
Գ.Կ. 17. ՈՒՐԲ. Պահք։
Դ.Ջ. 18. ՇԲ. Տօն ՍՐԲՈՅՆ ԻՍԱՀԱԿԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՅ։
Դ.Կ. 19. *ԿԻՐ. Չորրորդ՝ զկնի Ծննդեան։ Հարց՝ Դ.Կ. Որ յահեղակերպ։ Մեծ. Աստուածածին մայր լուսոյ։
Ա.Ջ. 20. ԲՇ. Տօն Սրբոյն Մարկոսի Եպսին., Պիոնի Քհնյին., Կիւրղի եւ Բենիամինի Սրկցն., եւ Սրբոց Վկայիցն Արշամեհի, Որմզդանայ եւ Սայենի։
Ա.Կ. 21. ԳՇ. Տօն ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ ՄԵՐՈՑ։
Բ.Ջ. 22. ԴՇ. Պահք։
Բ.Կ. 23. *ԵՇ. Տօն ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ ՄԵՐՈՑ 1036 ՎԿԱՅԻՑՆ, որք կատարեցան ի մեծ պատերազմին։
Գ.Ջ. 24. ՈՒՐԲ. Պահք։
Գ.Կ. 25. ՇԲ. Տօն Սրբոյն Կ. Պոլսոյ Սուրբ Ժողովոյն 150 Հայրապետացն.:— Երեկոյին՝ փակեալ խորանն։
Դ.Կ. 26. *ԿԻՐ. Առաջին՝ Մեծ Պահոց։— Օրհ. Դ.Կ. Բանն որ ընդ Հօր. իւր սարօքն։— Բուն Բարեկենդան։— Երեկոյին՝ Նախատօնակ Տեառնընդառաջի եւ Անդաստան։ Մէլէտ։
Ա.Ջ. 27. *ԲՇ. Ա. օր Մեծպահոց։— Տօն Քառասնօրեայ Գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Տաճարն։
Ա.Կ. 28. ԳՇ. Բ. օր Մեծպահոց։



Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР



Խոյ

## ՄԱՐՏ (31 Օր)

ԲՁ· 1· ԴՇ· Գ· օր Մեծապահոց։— Սկիզբն կարգին Ապաշխարութեան մինչեւ ի Ծաղկազարդն։
ԲԿ· 2· ԵՇ· Դ· օր Մեծապահոց։
ԳՁ· 3· ՈՒՐԲ· Ե· օր Մեծ Պահոց։
ԳԿ· 4· ՇԲ· Զ· օր Մեծ Պահոց։— Տօն Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին։
ԴՁ· 5· *ԿԻՐ· Երկրորդ, եւ Է· օր Մեծ Պահոց։— Օրհ· ԴՁ· Որ զօրէնս սրբութեան· իւր սարօքն։— Արտաքսման։
ԴԿ· 6· ԲՇ· Ը· օր Մեծ Պահոց։
ԱՁ· 7· ԳՇ· Թ· օր Մեծ Պահոց։
ԱԿ· 8· ԴՇ· Ժ· օր Մեծ Պահոց։
ԲՁ· 9· ԵՇ· ԺԱ· օր Մեծ Պահոց։
ԲԿ· 10· ՈՒՐԲ· ԺԲ· օր Մեծ Պահոց։
ԳՁ· 11· ՇԲ· ԺԳ· օր Մեծ Պահոց։— Տօն Սրբոյն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետին·, եւ միւս Կիւրղի Եպսին·, եւ մօրն նորա Աննայի։
ԳԿ· 12· *ԿԻՐ· Երրորդ, եւ ԺԴ· օր Մեծ Պահոց։— Օրհ· Օրհնեմք զՔեզ· իւր սարօքն։ Անառակին։
ԴՁ· 13· ԲՇ· ԺԵ· օր Մեծ Պահոց։



ԴԿ· 14· ԳՇ· ԺԶ· օր Մեծ պահոց։
ԱՁ· 15· ԴՇ· ԺԷ· օր Մեծ պահոց։
ԱԿ· 16· ԵՇ· ԺԸ· օր Մեծ պահոց։
ԲՁ· 17· ՈՒՐԲ· ԺԹ· օր Մեծ պահոց։
ԲԿ· 18· ՇԲ· Ի· օր Մեծ պահոց։— Տօն Սրբոյն Յովհաննու Երուսաղեմայ Հայրապետին·, եւ Սրբոց Հայրապետացն· մերոց Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի Տաթեւացւոյն։
ԳՁ· 19· ԿԻՐ· Չորրորդ, եւ ԻԱ· օր Մեծ պահոց։— Օրհ· ԳՁ· Որ արարեր· իւր սարօք։ Տնտեսին։
ԳԿ· 20· ԲՇ· ԻԲ· օր Մեծ պահոց։
ԴՁ· 21· ԳՇ· ԻԳ· օր Մեծ պահոց։
ԴԿ· 22· ԴՇ· ԻԴ· օր Մեծ պահոց։— Միջինք։
ԱՁ· 23· ԵՇ· ԻԵ· օր Մեծ պահոց։
ԱԿ· 24· ՈՒՐԲ· ԻԶ· օր Մեծ պահոց։
ԲՁ· 25· ՇԲ· ԻԷ· օր Մեծ պահոց։— Տօն Սրբոց Մանկանցն Քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան։
ԲԿ· 26· *ԿԻՐ· Հինգերորդ, եւ ԻԸ· օր Մեծ պահոց։— Օրհ· ԲԿ· Որ պատուիրան· իւր սարօքն։— Դատաւորին։
ԳՁ· 27· ԲՇ· ԻԹ· օր Մեծ պահոց։
ԳԿ· 28· ԳՇ· Լ· օր Մեծ պահոց։
ԴՁ· 29· ԴՇ· ԼԱ· օր Մեծ պահոց։
ԴԿ· 30· ԵՇ· ԼԲ· օր Մեծ պահոց։
ԱՁ· 31· ՈՒՐԲ· ԼԳ· օր Մեծ պահոց։— Երեկոյին Նախատօնակ։



Ցուլ

## ԱՊՐԻԼ (30 Օր)

Ակ․ 1․ ՇԲ․ ԼԴ․ օր Մեծ պահոց:— Տօն Սրբոյն Գրիգոր Լուսաւորչին մերոյ սոսկալի Չարչարանացն եւ մտին ի Վիրապն:

ԲՉ․ 2․ *ԿԻՐ․ Վեցերորդ, եւ ԼԵ․ օր Մեծ պահոց:— Օրհ․ ԲՉ․ Որ զխորհուրդ․ իւր սարօքն: Գալստեան:

Բկ․ 3․ ԲՇ․ ԼԶ․ օր Մեծ պահոց:

ԳՉ․ 4․ ԳՇ․ ԼԷ․ օր Մեծ պահոց:

Գկ․ 5․ ԴՇ․ ԼԸ․ օր Մեծ պահոց:

ԴՉ․ 6․ ԵՇ․ ԼԹ․ օր Մեծ պահոց:

Դկ․ 7․ ՈՒՐԲ․ Խ․ օր Մեծ պահոց:

ԱՉ․ 8․ ՇԲ․ ԽԱ․ օր Մեծ պահոց:— Յիշատակ Յարութեանն Ղազարու:

Ակ․ 9․ *ԿԻՐ․ Եօթներորդ, եւ ԽԲ․ օր Մեծ պահոց:— ԾԱՂԿԱԶԱՐԴ: Տօն Գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Տաճարն: Առաւօտեան՝ Անդաստան․ Երեկոյին՝ Դռնբաց:

ԲՉ․ 10․ Աւագ ԲՇ․, ԽԳ․ օր Մեծ պահոց: Թզենւոյն:

Բկ․ 11․ Աւագ ԳՇ․, ԽԴ․ օր Մեծ պահոց:— Տասն Կուսանաց:

ԳՉ․ 12․ Աւագ ԴՇ․, ԽԵ․ օր Մեծ պահոց:— Իւղով Օծմանն:



Գկ․ 13․ *Աւագ ԵՇ․, ԽԶ․ օր Մեծ պահոց: — Տէրունական Ընթրեաց:— Երեկոյին Ոտնլուայ:

ԴՉ․ 14․ Աւագ ՈՒՐԲ․, ԽԷ․ օր Մեծ պահոց: — Չարչարանաց: Երեկոյին՝ Կարգ Թաղման:

Դկ․ 15․ Աւագ Շբ․, ԽԸ․ օր Մեծ պահոց:— Նաւակատիք, խրում, ճրագալոյց Զատկի:— Երեկոյին՝ Պատարագ եւ Նախատօնակ:

ԱՉ․ 16․ *ԿԻՐ․, ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:— Տաղաւար: Տօն Յիսնօրեայ: Ա․ օր եւ Ա․ Կիրակի Յինանց:— Այսօրուընէ սկսեալ կը քաղուին Դաւթի 150 Սաղմոսներ եւ կը մնան մինչեւ Համբարձում:— Առաւօտ եւ երեկոյ Անդաստան Յինանց բոլոր Կիրակիներուն:

Ակ․ 17․ *ԲՇ․ Բ․ օր Յինանց: ՄԵՌԵԼՈՑ

ԲՉ․ 18․ *ԳՇ․ Գ․ օր Յինանց:

Բկ․ 19․ ԴՇ․ Դ․ օր Յինանց:

ԳՉ․ 20․ *ԵՇ․ Ե․ օր Յինանց:— Տօն Աւետեաց Սրբոյ Կուսին Մարիամու Աստուածածնի:

Գկ․ 21․ ՈՒՐԲ․ Զ․ օր Յինանց:

ԴՉ․ 22․ ՇԲ․ Է․ օր Յինանց:

Դկ․ 23․ *ԿԻՐ․ Երկրորդ, եւ Ը․ օր Յինանց:— Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ:

ԱՉ․ 24․ ԲՇ․ Թ․ օր Յինանց:— Այսօրուընէ սկսեալ կը կարդացուին Չորս Աւետարանք, օրը չորս անգամ․ Ղուկաս եւ Յովհաննէս առտուները, իսկ Մատթէոս եւ Մարկոս՝ երեկոները, եւ կը հասնին չար-

չարանաց ճաշերուն մինչև Հոգեգալուստ:
ԱԿ. 25. ԳՇ. Ժ. օր Յինանց:
ԲՁ. 26. ԴՇ. ԺԱ. օր Յինանց:
ԲԿ. 27. ԵՇ. ԺԲ. օր Յինանց:
ԳՁ. 28. ՈՒՐԲ. ԺԳ. օր Յինանց:
ԳԿ. 29. ՇԲ. ԺԴ. օր Յինանց:
ԴՁ. 30. *ԿԻՐ. Երրորդ, եւ ԺԵ. օր Յինանց:
— Աշխարհամատրան *կամ* Կանաչ Կիրակի:

—o—

*—Իբրեւ հայ-քրիստոնեայ մարդ քա՞ջ ես. կրնա՞ս խղճմտանքիդ բացարձակ ազատութեան մէջ՝ խոստովանիլ թէ Հայր մը ունիս, որ յերկինս է:*

*Երանի՜ թէ կարող ըլլայիր վստահաբար եւ համարձակապէս ըսել. «Հայր մեր, որ յերկինս...»:*

*—Ս. Պատարագը հանդէսի համար չկատարուիր Եկեղեցւոյ մէջ. բայց կը կատարուի հանդիսաւորապէս, որ հաղորդուիս երբեմն երբեմն: Հաղորդուիլ կը նշանակէ ճանչնալ եւ գնահատել Փրկչին արեան գինը, որով փրկուած ես մեղքին իշխանութենէն:*

*—Աշխարհաքաղաքացի մի՛ ըլլար: Ազնուացուր ինքնութիւնդ. զօրացո՛ւր գիտակցութիւնդ. փարի՛ր, ամո՛ւր փարիր, պարծանքո՛վ փարիր այն դրօշին միայն, որուն քաղաքացին ես:*





Երկաւոր

## ՄԱՅԻՍ (31 Օր)

ԴԿ. 1. ԲՇ. ԺԶ. օր Յինանց:
ԱՁ. 2. ԳՇ. ԺԷ. օր Յինանց:
ԱԿ. 3. ԴՇ. ԺԸ. օր Յինանց:
ԲՁ. 4. ԵՇ. ԺԹ. օր Յինանց:
ԲԿ. 5. ՈՒՐԲ. Ի. օր Յինանց:
ԳՁ. 6. ՇԲ. ԻԱ. օր Յինանց:
ԳԿ. 7. *ԿԻՐ. Չորրորդ, և ԻԲ. օր Յինանց:— Կարմիր Կիրակի:
ԴՁ. 8. ԲՇ. ԻԳ. օր Յինանց:
ԴԿ. 9. ԳՇ. ԻԴ. օր Յինանց:
ԱՁ. 10. ԴՇ. ԻԵ. օր Յինանց:
ԱԿ. 11. ԵՇ. ԻԶ. օր Յինանց:
ԲՁ. 12. ՈՒՐԲ. ԻԷ. օր Յինանց:
ԲԿ. 13. ՇԲ. ԻԸ. օր Յինանց:
ԳՁ. 14. *ԿԻՐ. Հինգերորդ եւ ԻԹ. օր Յինանց:— Տօն Երեւման Սրբոյ Խաչին:
ԳԿ. 15. ԲՇ. Լ. օր Յինանց:
ԴՁ. 16. ԳՇ. ԼԱ. օր Յինանց:
ԴԿ. 17. ԴՇ. ԼԲ. օր Յինանց:
ԱՁ. 18. ԵՇ. ԼԳ. օր Յինանց:
ԱԿ. 19. ՈՒՐԲ. ԼԴ. օր Յինանց:
ԲՁ. 20. ՇԲ. ԼԵ. օր Յինանց:

ԲԿ. 21. *ԿԻՐ. Վեցերորդ, և ԼԶ. օր Յինանց:
ԳԶ. 22. ԲՇ. ԼԷ. օր Յինանց:
ԳԿ. 23. ԳՇ. ԼԸ. օր Յինանց:
ԴԶ. 24. ԴՇ. ԼԹ. օր. Յինանց:
ԴԿ. 25. *ԵՇ. Խ. օր Յինանց:— Տօն Համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Վիճակ:
ԱԶ. 26. ՈՒՐԲ. ԽԱ. օր Յինանց: Սկիզբն պահոց:
ԱԿ. 27. ՇԲ. ԽԲ. օր Յինանց:
ԲԶ. 28. *ԿԻՐ. Եօթներորդ, եւ ԽԳ. օր Յինանց:— Երկրորդ Ծաղկազարդ կամ Մեծահրաշի կիրակի:
ԲԿ. 29. ԲՇ. ԽԴ. օր Յինանց:
ԳԶ. 30. ԳՇ. ԽԵ. օր Յինանց:
ԳԿ. 31. ԴՇ. ԽԶ. օր Յինանց:

—o—

—Յիշէ՛ որ Մայրենի Եկեղեցին պէտք ունի քու ծառայութեանդ: Սիրո՛վ տուր նուէրներդ, կանոնաւորապէս վճարէ պարտքերդ:

—Կիրակիներդ նուիրէ հոգւոյդ և մարմնոյդ կազդուրման: Սովորէ դոնէ էջ մը կարդալ Տիեզերական Գիրքէն:

—Չափաւոր եղիր ուտելիքի եւ խմելիքի մէջ: Ծխամոլ մի՛ ըլլար: Գիտցի՛ր քունիդ արժէքը: Այսպէսով պիտի զգաս հոգւոյդ զուարթութիւնը:





Խեցգետին

## ՅՈՒՆԻՍ (30 Օր)

ԴԶ. 1. ԵՇ. ԽԷ. օր Յինանց:
ԴԿ. 2. ՈՒՐԲ. ԽԸ. օր Յինանց:
ԱԶ. 3. ՇԲ. ԽԹ. օր Յինանց:— Լրումն կարգի Տնօրինականացն Յարութեան եւ Աւետարանացն:
ԱԿ. 4. *ԿԻՐ. Ութերորդ, եւ Ծ. օր Յինանց:— ՏՕՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ:— Պենտեկոստէ: Լրումն Յիսնակաց:— Բարեկենդան Եղիական Պահոց:
ԲԶ. 5. ԲՇ. Պահք:— Տօն Հոգեգալստեան:
ԲԿ. 6. ԳՇ. Պահք:— Տօն Հոգեգալստեան:
ԳԶ. 7. ԴՇ. Պահք:— Տօն Հոգեգալստեան:
ԳԿ. 8. ԵՇ. Պահք:— Տօն Հոգեգալստեան:
ԴԶ. 9. ՈՒՐԲ. Պահք:— Տօն Հոգեգալստեան:
ԴԿ. 10. ՇԲ. Տօն Հոգեգալստեան:
ԱԶ. 11. *ԿԻՐ. Առաջին՝ զկնի Հոգեգալստեան:— Սկիզբն Յարութեան Կիրակէից: — Օրհ. ԱԶ. Երգեցուք: Հարց՝ ԱԶ. Որ ելլեր ի փրկութիւն:— Յիշատակ Եղիա Մարգարէի:— Երեկոյին Նախատօնակ:
ԱԿ. 12. ԲՇ. Տօն ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ:— Օրհ. ԴԿ. Անձինք նուիրեալք. Իւր սարօքն:—: Երեկոյին Նախատօնակ:

ԲՁ. 13. ԳՇ. Տօն ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑՆ ԳԱՅԻԱՆԵԱՆՑ:— Օրհ. Իւր սարօքն՝ Հռիփսիմեանց:
ԲԿ. 14. ԴՇ. Պահք:— Երեկոյին Նախատօնակ:
ԳՁ. 15. ԵՇ. Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին եւ Աթանագինեայ Եպսին.:
ԳԿ. 16. ՈՒՐԲ. Պահք:— Երեկոյին Նախատօնակ:
ԴՁ. 17. *ՇԲ. Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելանելոյն ի Վիրապէն:
ԴԿ. 18. *ԿԻՐ. Երկրորդ՝ զկնի Հոգեգալստեան:— Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյն Սրբոյն Էջմիածնի:— Օրհ. ԳՁ. Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի: Մեծ. Անսկզբնական Բանին:— Անդաստան:
ԱՁ. 19. ԲՇ. Տօն Սրբոց Մանկանցն Բեթղեհեմի, եւ Ակակիոսի Փհնյին., եւ Կոդրատիոսի զինաւորին:
ԱԿ. 20. ԳՇ. Տօն ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑՆ ՆՈՒՆԵԱՅ ԵՒ ՄԱՆԵԱՅ:— Օրհ. Հւր սարօքն՝ Հռիփսիմեանց:
ԲՁ. 21. ԴՇ. Պահք:
ԲԿ. 22. ԵՇ. Տօն Սրբոց Իշխանացն Սահակայ եւ Յովսեփայ, և սրբոց վկայիցն Սարգսի եւ Բագոսի:
ԳՁ. 23. ՈՒՐԲ. Պահք:
ԳԿ. 24. ՇԲ. Տօն ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՅ, եւ Խադայ Եպսին.:— Օրհ. ԲԿ. Որ զլոյս անճառ: Հարց՝ ԴՁ. Այսօր տօնէ Եկեղեցի, Իւր սարօքն:
ԴՁ. 25. *ԿԻՐ. Երրորդ՝ զկնի Հոգեգալստեան:— Հարց՝ ԱՁ. Պայծառացիր: Մեծ.



ԱՁ. Որ ընտրեցար:— Բարեկենդան Լուսաւորչին:
ԳԿ. 26. ԲՇ. Պահք:— Տօն Սրբոցն Եպիփանու Կիպրացւոյն, Բաբեղայ Հյրպտին. եւ երից աշակերտաց նորին:
ԱՁ. 27. ԳՇ. Տօն Սրբոցն Կոստանդիանոսի Թագաւորին եւ մօրն նորա Հեղինեայ:
ԱԿ. 28. ԴՇ. Պահք:
ԲՁ. 29. ԵՇ. Տօն Սրբոցն Թէոդիտոսի Գաղատացւոյն, եւ Թալիլեայ Բժշկին, եւ եօթն կուսանացն, որք յԱնկիւրիա կատարեցան:
ԲԿ. 30. ՈՒՐԲ. Պահք:— Երեկոյին Նախատօնակ:

—o—

—Յարգեցէք ձեր Մայրենի Եկեղեցւոյն սովե-կարգուկանոնը: Ձեր պզտիկներուն սորվեցուցէք աղօթել սեղանի վրայ եւ պառկելու ատեն: Պզտիկները անկնունք մի՛ թողուք: Հարսնիքները ըրէք ներելի օրերու մէջ, որոնց ցանկը գրուած է այս ՕՐԱՑՈՅՑԻՆ մէջ:

—Սիրէ Եկեղեցիդ: Եւ սէրդ յայտնէ գործնականապէս. այսինքն՝ կանոնաւորապէս եկեղեցի գնա, աղօթէ հոգւով եւ ճըշմարտութեամբ:

—Ասպետակա՛ն եղիր ամենէն առաջ հանդէպ քու անձիդ, եւ յետոյ հանդէպ ուրիշներու անձին:



Առիւծ

## ՅՈՒԼԻՍ (31 Օր)

Գ.Զ. 1. *ՇԲ. Տօն ԳԻՒՏԻ ՆՇԽԱՐԱՑՆ ՍՐԲՈՑՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՄԵՐՈՅ: Օրհ. Գ.Կ. Լերինք ամենայն: Հարց՝ Բ.Զ. Որ առաքեցեր: Մկնք. Գ.Զ. Հրաշափառ եւ Որ կոչեցար:

Գ.Կ. 2. *ԿԻՐ. Չորրորդ՝ զկնի Հոգեգալստեան: Հարց՝ Ա.Կ. Որ եկիր ի փրկութիւն:

Դ.Զ. 3. ԲՇ. Տօն Սրբոց Վկայիցն Անտոնինոսի, Թէոփիլոսի, Անիկտոսի եւ Փոտինոսի:

Դ.Կ. 4. ԳՇ. Տօն Սրբոյն Դանիէլի Մարգարէին եւ Երից Մանկանցն:

Ա.Զ. 5. ԴՇ. Պահք:

Ա.Կ. 6. *ԵՇ. Տօն ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑՆ ՄԵՐՈՑ ԻՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ:— Օրհ. Որք զարդարեցին, իւր սարօքն: Մնկք. և Հմբրձ. Գ.Զ. Նմանեալ Մովսէսի:

Բ.Զ. 7. ՈՒՐԲ. Պահք:

Բ.Կ. 8. ՇԲ. Տօն ՍՐԲՈՑՆ ՏՐԴԱՏԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՄԵՐՈՅ, ԵՒ ԱՇԽԷՆ ՏԻԿՆՈՋՆ, ԵՒ ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏՈՅՆ:

Գ.Զ. 9. *ԿԻՐ. Հինգերորդ՝ զկնի Հոգեգալստեան:— Գիւտ Տփոյ:— Օրհ. Գ.Կ. Երգեցէք որդիք, իւր սարօքն:



Գ.Կ. 10. ԲՇ. Տօն Սրբոցն Կալիստրատոսի և 49 վկայիցն, եւ Ղուկիանոսի Քհնյին:

Դ.Զ. 11. ԳՇ. Տօն Սրբոյն Զաքարիա Մարգարէին:

Դ.Կ. 12. ԴՇ. Պահք:

Ա.Զ. 13. ԵՇ. Տօն Սրբոյն Եղիսէի Մարգարէին:

Ա.Կ. 14. ՈՒՐԲ. Պահք:

Բ.Զ. 15. ՇԲ. Տօն Սրբոց Երկոտասանից Առաքելոցն Քրիստոսի, եւ Սրբոյն Պօղոսի երեքտասաներորդ Առաքելոյն:

Բ.Կ. 16. *ԿԻՐ. Վեցերորդ՝ զկնի Հոգեգալստեան: Հարց՝ Ա.Կ. Որ վասն մերոյ փրկութեան: Մեծ. Ա.Կ. Նոր խորանին:— Բարեկենդան Վարդավառի:

Գ.Զ. 17. ԲՇ. Պահք:

Գ.Կ. 18. ԳՇ. Պահք:

Դ.Զ. 19. ԴՇ. Պահք:

Դ.Կ. 20. ԵՇ. Պահք:

Ա.Զ. 21. ՈՒՐԲ. Պահք:

Ա.Կ. 22. ՇԲ. Նաւակատիք:— Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ:— Երեկոյին Նախատօնակ:

Բ.Զ. 23. *ԿԻՐ. ՎԱՐԴԱՎԱՌ: Տօն Պայծառակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:— Տաղաւար: Օրհ. Ա.Զ. Որ ի լերինն այլակերպեալ:— Հարց՝ Ա.Կ. Զանճառելի:— Անդաստան առաւ եւ երեկոյ: Միջոց ուտիքն չորս շաբաթ:

Բ.Կ. 24. *ԲՇ. Բ. օր Վարդավառի: ՄԵՌԵԼՈՑ:

Գ.Զ. 25. ԳՇ. Գ. օր Վարդավառի:

Գ.Կ. 26. ԴՇ. Պահք:

Դ.Զ. 27. ԵՇ. Տօն Եսայեայ Մարգարէին:

Դկ. 28. ՈՒՐԲ. Պահք:— Երեկոյին Նախատօնակ:

ԱՁ. 29. *ՇԲ. Տօն ՍՐԲՈՑՆ ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՄԵՐՈՑ ԵՒ ՍԱՆԴԽՏՈՅ ԿՈՅՍԻՆ:— Օրհ. ԳՁ. Երանելի սուրբ Առաքեալքն, իւր սարօքն: Մեծ. ԱՁ. Որ զբանն Աստուած: Մնկնք. ԴԿ. Քեւ պարծի:

ԱԿ. 30. *ԿիՐ. Երկրորդ՝ զկնի Վարդավառին: Հարց՝ ԲՁ. Որ ի յերկնից իջեր: Մեծ. Ըզ քեզ կոյս:

ԲՁ. 31. ԲՇ. Տօն Սրբոցն Կիպրիանոսի Եպ-սին., եւ 45 վկայիցն, եւ Սրբոց Կուսանացն Յուստինեայ, Եւփիմեայ, եւ Քրիստինեայ:

—o—

—Ամուսնութիւնը նուիրական պատասխանատուութիւն մըն է: Երբ կ'զգաս այս պատասխանատուութիւնը, երջանիկ պիտի ըլլաս:

—Սիրէ Ազգդ: Սիրէ ո՛չ թէ խօսքով, այլ գործքով: Ողջմտանքովդ կշռէ եւ տես թէ ի՞նչպէս կը սիրես Ազգդ: Հայ արիւնը մաքո՞ւր կը պահե՞ս. Հայ լեզուն կը խօսի՞ս. Հայ մարդը կը յարգե՞ս:





Կոյս

## ՕԳՈՍՏՈՍ (31 Օր)

ԲԿ. 1. ԳՇ. Տօն Սրբոյն Աթանագինեայ Եպ-սին., եւ տասն աշակերտացն, եւ հինգ վկայիցն:

ԳՁ. 2. ԴՇ. Պահք:

ԳԿ. 3. ԵՇ. Տօն Սրբոց Նախահարցն:

ԴՁ. 4. ՈՒՐԲ. Պահք:

ԴԿ. 5. ՇԲ. Տօն Սրբոյն Որդւոց եւ Թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի:

ԱՁ. 6. *ԿիՐ. Երրորդ՝ զկնի Վարդավառին: Հարց՝ ԲՁ. Անապական:

ԱԿ. 7. ԲՇ. Տօն Սրբոց Մակաբայեցւոցն՝ Եղիազարու քհնյին., եւ Շամունեայ եւ եօթն որդւոց նորին:

ԲՁ. 8. ԳՇ. Տօն Սրբոց երկոտասան Մարգարէիցն:

ԲԿ. 9. ԴՇ. Պահք:

ԳՁ. 10. ԵՇ. Տօն Սրբոցն Սոփիայ եւ երից դստերացն, Պիստոսի, Էլպիսի և Ագապի:

ԳԿ. 11. ՈՒՐԲ. Պահք:

ԳՁ. 12. ՇԲ. Տօն Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին:

Դ.Կ. 13. *ԿԻՐ. Զորրորդ՝ զկնի Վարդավառին։ Հարց՝ Բ.Կ. Որ յերկնային զինուորութեանց։ Հմբրձ. Դ.Կ. Յորժամ եկին եւ էջ հրեշտակն։

Ա.Ձ. 14. ԲՇ. Տօն Սրբոցն Կիրակոսի եւ մօրն Յուղիտայի, եւ Սրբոցն Գորդիոսի, Պօղիքտոսի եւ Գրիգորիսի։

Ա.Կ. 15. ԳՇ. Տօն ՍՐԲՈՑՆ ՎԱՀԱՆԱՑ ԳՈՂԹՆԱՑԻՈՑՆ, եւ Սրբոցն Եւգինեայ կուսին, եւ հօրն նորա Փիլիպպոսի եւ մօրն Կղօդեայ, եւ երկաց եղբարցն Սերգեայ եւ Ապիտոնի եւ երկուց ներքինեացն։

Բ.Ձ. 16. ԳՇ. Պահք։

Բ.Կ. 17. ԵՇ. Տօն Սրբոց Վկայիցն Եւգինէոսի, Մակարիոսի, Վալերիոսի, Կանդիտոսի եւ Ակիւղասայ։

Գ.Ձ. 18. ՈՒՐԲ. Պահք։

Գ.Կ. 19. ՇԲ. Տօն Եփեսոսի Սուրբ Ժողովոյն 200 Հայրապետացն։

Դ.Ձ. 20. *ԿԻՐ. Հինգերորդ՝ զկնի Վարդավառին։— Հարց՝ Գ.Ձ. Փառաւորեմք զՔեզ։ Հմբրձ. Դ.Ձ. Կանանցն կանխելով։— Բարեկենդան Աստուածածնի։

Դ.Կ. 21. ԲՇ. Պահք։

Ա.Ձ. 22. ԳՇ. Պահք։

Ա.Կ. 23. ԴՇ. Պահք։

Բ.Ձ. 24. ԵՇ. Պահք։

Բ.Կ. 25. ՈՒՐԲ. Պահք։

Գ.Ձ. 26. ՇԲ. Նաւակատիք։— Տօն Շողակաթին Սրբոյ Էջմիածնի։— Օրհ. Գ.Ձ. Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի, իւր սարօքն։— Երեկոյին Նախատօնակ։



Դ.Կ. 27. *ԿԻՐ. Տօն ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։ Տաղաւար։ Տօն իննօրեայ։ Օրհ. Դ.Ձ. Որ զնախամօրն։ Առաւու եւ երեկոյ Անդաստան։ Առաւու խաղողօրհնէք։ Միջոց ուտիքն երեք շաբաթ։

Գ.Ձ. 28. *ԲՇ. Բ. օր Աստուածածնի։ ՄԵՌԵԼՈՑ։

Դ.Կ. 29. ԳՇ. Գ. օր Աստուածածնի։

Ա.Ձ. 30. ԴՇ. Դ. օր Աստուածածնի։

Ա.Կ. 31. ԵՇ. Ե. օր Աստուածածնի։

—o—

## ՇԻՏԱԿ ԽՕՍՔԵՐ

(Սողոմոնի Առակներէն)

Յառաջ քան զբեկումն՝ համարին թշնամանքն,
և նախ քան զգլորումն՝ չարաբարութիւն։

Հաւատացելոյն ամենայն աշխարհ ընչիւք լի է, անհաւատին եւ ոչ դանգ մի։

Պսակ ծերոց՝ որդիք որդւոց. պարծանք որդւոց՝ հարք իւրեանց։

Այր յեղյեղուկ լեզուաւ՝ անկցի ի չարիս։

Ակն առնուլ ամպարշտի չէ բարւոք, եւ ոչ զիրաւունս խոտորել արդարոյ ի դատաստանի։

Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ քաղաք ամուր, եւ զօրացեալ բարձրացեալ իբրեւ զթագաւորութիւն հաստատեալ։

Մահ եւ կեանք ի ձեռս լեզուի, եւ որ յաղթէ նմա՝ կերիցէ զպտուղ նորա։



Կշիռ

## ՍԵՊՏԵՄԲԵՐ (30 Օր)

ԲՁ· 1· ՈՒՐԲ· Զ· օր Աստուածածնի:
ԲԿ· 2· ՇԲ· Է· օր Աստուածածնի:
ԳՁ· 3· *ԿԻՐ· Երկրորդ, եւ Ը· օր Աստուածածնի:
ԳԿ· 4· ԲՇ· Թ· օր Աստուածածնի:
ԴՁ· 5· ԳՇ· Տօն Սրբոյն Յովակիմայ եւ Աննայի Ծնողացն Ս· Աստուածածնին, եւ կանանցն իւղաբերից:
ԴԿ· 6· ԴՇ· Պահք:
ԱՁ· 7· ԵՇ· Տօն Սրբոյն Երեմեայ Մարգարէին:
ԱԿ· 8· ՈՒՐԲ· Պահք:
ԲՁ· 9· ՇԲ· Տօն Սրբոց Առաքելոցն Թովմայի, Յակոբայ եւ Շմաւոնի:
ԲԿ· 10· *ԿԻՐ· Երրորդ՝ զկնի Աստուածածնի: — Գիւտ Գօտւոյ: Օրհ· ԳԿ· Երգեցէք որդիք, իւր սարօքն:
ԳՁ· 11· ԲՇ· Տօն Սրբոյն Ստեփանոսի Ուլնեցւոյն, և Սրբոց վկայիցն Գոհարինեայ, Ծամիդոսի, Տուքիկոսի եւ Ռստիկոսի:
ԳԿ· 12· ԳՇ· Տօն Սրբոց Մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի եւ Զաքարեայ՝ հօրն Յովհաննու Մկրտչի:
ԴՁ· 13· ԴՇ· Պահք:
ԴԿ· 14· ԵՇ· Տօն Սրբոցն Յովհաննու Կարապետին եւ Յորայ Արդարոյն:
ԱՁ· 15· ՈՒՐԲ· Պահք:
ԱԿ· 16· ՇԲ· Տօն Նիկիոյ Սուրբ Ժողովոյն 318 Հայրապետացն:
ԲՁ· 17· *ԿԻՐ· Չորրորդ՝ զկնի Աստուածածնի: Հարց՝ ԳԿ· Անճառելի: Հմբրձ· ԲՁ· Ի գերեզման եւ Եկին ի գերեզման:— Բարեկենդան Ս· Խաչի:
ԲԿ· 18· ԲՇ· Պահք:
ԳՁ· 19· ԳՇ· Պահք:
ԳԿ· 20· ԴՇ· Պահք:
ԴՁ· 21· ԵՇ· Պահք:— Տօն Ծննդեան Ս· Աստուածածնի ի յԱննայէ:
ԴԿ· 22· ՈՒՐԲ· Պահք:
ԱՁ· 23· ՇԲ· Նաւակատիք: Տօն է Սրբոյ Եկեղեցւոյ ի նաւակատիս Սրբոյ Խաչին:— Երեկոյին Նախատօնակ:
ԱԿ· 24· *ԿԻՐ· Տօն ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ:— Տաղաւար: Օրհ· ԱՁ· Որ զանարատ բազուկս քո, իւր սարօքն:— Երեկոյին հանդէս խաչվերացի՝ Անդաստանով:
ԲՁ· 25· *ԲՇ· Տօն Խաչի: ՄԵՌԵԼՈՑ:
ԲԿ· 26· ԳՇ· Տօն Եկեղեցւոյ:
ԳՁ· 27· ԴՇ· Տօն Եկեղեցւոյ:
ԳԿ· 28· ԵՇ· Տօն Եկեղեցւոյ:
ԴՁ· 29· ՈՒՐԲ· Տօն Խաչի:
ԴԿ· 30· ՇԲ· Տօն Խաչի:



Կարիճ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ (31 Օր)

Ա.Զ. 1. *ԿԻՐ. Երկրորդ՝ զկնի Խաչի: Օրհ. Դ.Զ. Որ եկիր կամաւ հօր: Մեծ. Աթոռ քրովբէական: Հմբրձ. Ընդ կանայսն:— Բարեկենդան Վարագայ Սուրբ Խաչին:

Ա.Կ. 2. ԲՇ. Պահք:— Տօն Սրբոցն Մամասայ եւ Փիլիկամիոնի, եւ Սիմէոնի Սինակեցւոյն:

Բ.Զ. 3. ԴՇ. Պահք:— Տօն Սրբոց Կուսանացն Փեփրոնեայ եւ Մարիանեայ եւ ՇՈՒՇԱՆԱՅ՝ ԴՍՏԵՐ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ:

Բ.Կ. 4. ԴՇ. Պահք:

Գ.Զ. 5. ԵՇ. Տօն Սրբոց Հայրապետացն. Բարաղամու, Անթիմոսի եւ Երանոսի:

Գ.Կ. 6. ՈՒՐԲ. Պահք:

Դ.Զ. 7. ՇԲ. Տօն Սրբոցն Գէորգայ Զօրավարին, եւ Աղոկոսի եւ Ռոմանոսի Երգեցողին:

Դ.Կ. 8. *ԿԻՐ. Երրորդ՝ զկնի Խաչի:— Տօն Վարագայ Ս. Խաչին: Օրհ. Ա.Կ. Նշանաւ ամենայաղթ, իւր սարօքն:— Միջոց ուտիք ութ շաբաթ:

Ա.Զ. 9. ԲՇ. Տօն Սրբոյն Դաւթի Դվնեցւոյն, եւ սրբոց վկայիցն Ղամբէոսի եւ Ղամբէուհւոյն:



Ա.Կ. 10. ԳՇ. Տօն Սրբոցն Եւստաթէոսի եւ կնոջ նորա Թէոփիստեայ, եւ երկուց որդւոցն, եւ Սրբոց Կուսանացն Երմոնեայ եւ Նեքտառինեայ:

Բ.Զ. 11. ԴՇ. Պահք:

Բ.Կ. 12. ԵՇ. Տօն Սրբոց Իշխանացն Սահակայ եւ Համազասպայ:

Գ.Զ. 13. ՈՒՐԲ. Պահք:

Գ.Կ. 14. ՇԲ. Տօն Սրբոց 72 Աշակերտացն Քրիստոսի:

Դ.Զ. 15. *ԿԻՐ. Չորրորդ՝ զկնի Խաչին: Հարց՝ Դ.Զ. Որ բարեբանեալ: Մեծ. Աստուածածին գերագոյն: Հմբրձ. Դ.Զ. Ահագին:

Դ.Կ. 16. ԲՇ. Տօն Սրբոցն Փոկասու Հայրապետին. եւ Երանոսի Հետեւողին Առաքելոց:

Ա.Զ. 17. ԴՇ. Տօն Սրբոց Կուսանացն Թեկղի, Վառվառեայ եւ Պեղիղեայ:

Ա.Կ. 18. ԴՇ. Պահք:

Բ.Զ. 19. ԵՇ. Տօն Սրբոցն Պանդալէոնի բժըշկին, Երմողեայ Քհնյին, եւ Եւպրաքսեայ Կուսին:

Բ.Կ. 20. ՈՒՐԲ. Պահք:

Գ.Զ. 21. ՇԲ. Տօն Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովպայ Մաշթոցին, Եղիշէի Պատմագրին, Մովսէսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն, Ներսիսի Շնորհալւոյն եւ Ներսիսի Լամբրոնացւոյն: Օրհ. Ա.Կ. Որք զարդարեցին, իւր սարօքն: Մկնք. եւ Հմբրձ. Գ.Զ. Նմանեալ Մովսէսի

Գ.Կ. 22. *ԿԻՐ. Հինգերորդ՝ զկնի Խաչին: Հարց՝ Գ.Զ. Որ ի քառակերպեան: Մեծ.

խորանաջարկ: Հմբրձ. Գ.Կ. Զաստուածային եւ Ըզ քո յարութիւնդ:
Դ.Զ. 23. ԲՇ. Տօն Գիւտի նշխարացն Սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսին, և Սրբոց Հարցն Թաթլոյ, Վարոսի, Թումասու, Անտոնի, Կրօնիդեայ, եւ եօթն Խոստաճարակացն, որք յիննակեայ Վանսն կատարեցան:
Դ.Կ. 24. ԳՇ. Տօն Սրբոց Առաքելոցն Անանեայ, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպոսի, Յովհաննու, Շիղայի եւ Սիղուանոսի:
Ա.Զ. 25. ԴՇ. Պահք:
Ա.Կ. 26. ԵՇ. Տօն Սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյն, եւ Սրբոց Առաքելոցն Տիմոթէոսի եւ Տիտոսի:
Բ.Զ. 27. ՈՒՐԲ. Պահք:
Բ.Կ. 28. ՇԲ. Տօն Սրբոց Աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու:
Գ.Զ. 29. *ԿԻՐ. Վեցերորդ՝ զկնի Խաչի: Հարց՝ Գ.Զ. Յորժամ ի խաչին: Մեծ. Մայր լուսոյ Մարիամ: Հմբրձ. Գ.Զ. Իւղաբեր, Այսօր յարութիւն եւ ի խաչանիշ:
Գ.Կ. 30. ԲՇ. Տօն Սրբոյն Ղոնկիանոսի Հարիւրապետին, որ հաւատաց ի խաչելութիւնն Քրիստոսի, եւ Յովսեփայ Աստուածահօրն, եւ Յովսեփայ Արեմաթացւոյն, եւ բարեկամին Քրիստոսի Ղազարու, եւ քերցն նորա Մարթայի եւ Մարիամու:
Դ.Զ. 31. ԳՇ. Տօն Սրբոցն Թէոդիտոնի Քհյին. եւ Զենոնի Զինուորին, եւ Մակարայ, Նիզոկսեայ եւ Ռամելայ:





Աղեղնաւոր

## ՆՈՅԵՄԲԵՐ (30 Օր)

Դ.Կ. 1. ԴՇ. Պահք:
Ա.Զ. 2. ԵՇ. Տօն Սրբոց Խարիթեանցն, եւ Սրբոց Վկայիցն Արտեմեայ եւ Քրիստափորի, եւ երկուց կանանցն Կալինիկեայ եւ Ակիւլինեայ:
Ա.Կ. 3. ՈՒՐԲ. Պահք:
Բ.Զ. 4. ՇԲ. Տօն Սրբոց Երկոտասանից Վարդապետացն:
Բ.Կ. 5. *ԿԻՐ. Եօթներորդ՝ զկնի Խաչի:— ԳԻՒՏ ԽԱՉ: Օրհ. Ա.Զ. Հրաշակերտ եւ զօրեղ, Իւր սարօքն:
Գ.Զ. 6. ԲՇ. Տօն Սրբոցն Անաստասայ Քհյին. եւ Վարոսի եւ Թէոդիտեայ, եւ որդւոյ նորա, եւ որք ընդ նմա կատարեցան:
Գ.Կ. 7. ԳՇ. Տօն Սրբոց Հիպերիքեանցն, որք ի Սամոսատ կատարեցան:
Դ.Զ. 8. ԴՇ. Պահք:
Դ.Կ. 9. ԵՇ. Սրբոցն Սեւերիանոսի Սեբաստացւոյն, եւ Բարեկայ ծերոյն եւ 84 Աշակերտաց նորին:
Ա.Զ. 10. ՈՒՐԲ. Պահք:
Ա.Կ. 11. ՇԲ. Տօն Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան Հայրապետին.:

Բ.Զ. 12. *ԿԻՐ. Ութներորդ՝ զկնի խաչի: Հարց՝ Դ.Կ. Որ զամենազօր: Մեծ. Աստուածածին մայր եւ կոյս: Հմբրձ. Բ.Զ. Ձայն աւետաւոր հրեշտակին զուարձացոյց:

Բ.Կ. 13. ԲՇ. Տօն Սրբոյն Ստեփաննոսի Հռոմայ Հայրպտին. եւ Բահանայից եւ Սարկաւագաց եւ ժողովրդոցն:

Գ.Զ. 14. ԳՇ. Տօն Սրբոյն Ակեփսիմեայ Եպսին. եւ Յովսեփայ Քհյին., Այիթալա Սրկզին., եւ Պղատոնի Վկային:

Գ.Կ. 15. ԴՇ. Պահք:

Դ.Զ. 16. ԵՇ. Տօն Սրբոց Հյրպտցն. Մետրոփանոսի, Աղեքսանդրոսի եւ Պօղոսի Խոստովանողին եւ Սրբոց Նոտարացն Մարկիանոսի եւ Մարտիրոսի:

Դ.Կ. 17. ՈՒՐԲ. Պահք:

Ա.Զ. 18. ՇԲ. Տօն Սրբոց Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի, եւ ամենայն երկնային Զօրացն:

Ա.Կ. 19. *ԿԻՐ. Իններորդ՝ զկնի խաչին: Հարց՝ Դ.Կ. Այսօր ցնծայ: Մեծ. Աստուածածին Պայծառ: Հմբրձ. Ա.Կ. Յարուցեալ Տէրն, եւ Սքանչելի հրեշտակն:

Բ.Զ. 20. ԲՇ. Տօն Սրբոյն Մելիտոսի Անտիոքայ Հայրպտին, եւ Մինասայ Եգիպտացւոյն եւ միւս Մելիտոսի Եպսին., Բարսայ Քհյին. եւ Շինու Սրկզին.:

Բ.Կ. 21. ԳՇ. Տօն Սրբոյն Դեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի Քհյին.:

Գ.Զ. 22. ԴՇ. Պահք:

Գ.Կ. 23. ԵՇ. Տօն Սրբոյն Գուրիասայ, Սամոնասայ, եւ Աբիբայ Սրկզին., Ոսմանոսի Միայնակեցին, Մանկանն Խոստովանողի եւ Հիւսիքոսի Զինուորին:



Դ.Զ. 24. ՈՒՐԲ. Պահք:

Դ.Կ. 25. ՇԲ. Տօն Սրբոց Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի:

Ա.Զ. 26. *ԿԻՐ. Տասներորդ՝ զկնի Խաչին: Հարց՝ Ա.Զ. Որ եկիր ի փրկութիւն: Հմբրձ. Ա.Զ. Որ անճառ (ցվերջն):

Ա.Կ. 27. ԲՇ. Տօն Սրբոյն Անդրէի Զօրավարին եւ Բանակի նորին, Կալինիկոսի եւ Դոմետեայ Վկայից:

Բ.Զ. 28. ԳՇ. Տօն Սրբոյն Անդրիանոսի եւ կնոջ նորա Անատոլայ, Թէոդորոսի եւ Եւթիւրոսի վկայից:

Բ.Կ. 29. ԴՇ. Պահք:

Գ.Զ. 30. ԵՇ. Տօն ՍՐԲՈՑՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԵՒ ԽՈՐԵՆԱՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԱՑՆ ՄԵՐՈՑ, եւ Անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի, եւ Աստուածատրոյ վկային:

—o—

Որ եգիտ կին բարի՝ եգիտ շնորհս, եւ ընկալաւ յԱստուծոյ ուրախութիւն:

Լաւ է բարեկամ մերձաւոր՝ քան զեղբայր հեռաւոր:

Ամօթ հօր՝ որդի անմիտ:

Խորհուրդք մօք պատրաստեսցին, եւ պատերազմ իմաստութեամբ մղեսցի:

Զարդ երիտասարդաց իմաստութիւն, և փառք ծերոց ալիք:

Տուրք գաղտնիք՝ դարձուցանեն զբարկութիւն. իսկ որ խնայէ ի տուրս՝ սաստիկ բարկութիւն յարուցանէ:



Այծեղջիւր

## ԴԵԿՏԵՄԲԵՐ (31 Օր)

Գ.Կ. 1. ՈՒՐԲ. Պահք:
Դ.Զ. 2. ՇԲ. Տօն Ամենայն Սրբոց, հնոց եւ նորոց, յայտնից եւ անյայտից:
Դ.Կ. 3. *ԿԻՐ. Մետասաներորդ` զկնի Խաչին: Հարց` Ա.Զ. Օրհնեալ ես Տէր: Հմբրձ. Դ.Կ. Հրեշտակացն դասք եւ Հրեշտակ քո Տէր:— Բարեկենդան Յիսնակաց: Երեկոյին` Նախատօնակ:
Ա.Զ. 4. *ԲՇ. Պահք:— Տօն երից ամաց Ընծայման Կուսին ի Տաճարն:— Օրհ. Ա.Կ. Որ նախնեաց, իւր սարօքն:
Ա.Կ. 5. ԳՇ. Պահք:
Բ.Զ. 6. ԴՇ. Պահք:
Բ.Կ. 7. ԵՇ. Պահք:
Գ.Զ. 8. ՈՒՐԲ. Պահք:
Գ.Կ. 9. ՇԲ. Տօն Սրբոյն Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին. եւ Միւռոնայ Եպսին.:
Դ.Զ. 10. *ԿԻՐ. Առաջին` Յիսնակաց: Հարց` Ա.Կ. Անսկիզբն բանդ: Հմբրձ. Դ.Զ. Որ ի վերդ ես:
Դ.Կ. 11. ԲՇ. Տօն Սրբոց Կուսանացն Յուլիանեայ եւ Վասիլուհւոյ:



Ա.Զ. 12. ԳՇ. Տօն Սրբոյն Ղունկիանոսի Բհյին. եւ Սրբոցն Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի եւ Ոնեսիմեայ եւ այլոց աշակերտացն Պօղոսի:
Ա.Կ. 13. ԴՇ. Պահք:
Բ.Զ. 14. ԵՇ. Տօն Սրբոցն Կղեմայ Հայրապետին. եւ Բագարատայ Տաւոմենոյ Եպսին.:
Բ.Կ. 15. ՈՒՐԲ. Պահք:
Գ.Զ. 16. *ՇԲ. Տօն ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑՆ ՄԵՐՈՑ ԹԱԴԷՈՍԻ ԵՒ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ:
Գ.Կ. 17. *ԿԻՐ. Երկրորդ` Յիսնակաց: Հարց` Բ.Զ. Որ թագաւորդ ես: Հմբրձ. Գ.Կ. Առեալ եւ մեր:
Դ.Զ. 18. ԲՇ. Տօն Սրբոցն Գենարիոսի Եպսին. եւ Մերկերիոսի Զինուորին, եւ Սրբոցն Յակովկայ եւ Իրաւափառայ:
Դ.Կ. 19. ԳՇ. Տօն Սրբոյն նախավկայ եւ անդրանիկ Թագաւորին Աբգարու:
Ա.Զ. 20. ԴՇ. Պահք:
Ա.Կ. 21. ԵՇ. Տօն Սրբոց Հարցն Եգիպտացւոց, եւ այլոց Սրբոց Հարցն:— Երեկոյին` Նախատօնակ:
Բ.Զ. 22. *ՈՒՐԲ. Տօն յղութեան Սրբոյ Կուսին Մարիամու ի յԱննայէ:— Օրհ. Գ.Կ. Երգեցէք որդիք Սիոնի, իւր սարօքն:
Բ.Կ. 23. ՇԲ. Տօն Սրբոյն Նիկողայոսի Զմիւռնացւոյ Սքանչելագործ Հայրապետին.:
Գ.Զ. 24. *ԿԻՐ. Երրորդ` Յիսնակաց: Հարց` Բ.Կ. Որ զծառայի: Հմբրձ. Գ.Զ. Փառաւորեալ է քո:— Բարեկենդան Ս. Յակոբայ:

Գ.Կ. 25. ԲՇ. Պահք:— Տօն է Սրբոյն Մինասայ, Երմոգինեայ եւ Գրաբոսի, եւ Կամաւոր Աղքատացն Յովհաննու եւ Ալեքսիանոսի:

Գ.Ձ. 26. ԳՇ. Պահք:— Տօն Սրբոյն Կոռնելիոսի Հարիւրապետին, եւ Շմաւոնի աշակերտին Քրիստոսի, որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պօղիկարպոսի Հայրապետին Զմիւռնիոյ, եւ Սրբոց Վկայիցն, որք յԱրեւելս կատարեցան:

Դ.Կ. 27. ԴՇ. Պահք:

Ա.Ձ. 28. ԵՇ. Տօն Սրբոյն Եւստրատիոսի, Օքսենտիոսի, Եւգենէոսի, Որեստէսի եւ Մարդարիոսի:

Ա.Կ. 29. ՈՒՐԲ. Պահք:— Երեկոյին Նախատօնակ:

Բ.Ձ. 30. ՇԲ. Տօն Սրբոյն Յակոբայ՝ Մծբնայ Հայրապետին., Մարուգէի Ծղնաւորին եւ Մելիտոսի Եպսին.:

Բ.Կ. 31. *ԿԻՐ. Չորրորդ՝ Յիսնակաց: Հարց՝ Գ.Ձ. փառաւորեալ Որդի: Հմբրծ. Բ.Կ. Քրիստոս յարեաւ, Առաւօտեան եւ կանխեցին:

—o—

Լաւ է բնակել յանապատի՝ քան ընդ կնոջ անզգամի՝ լեզուանւոյ եւ բարկացողի:

Որ պահէ զբերան իւր եւ զլեզու՝ պահէ ի նեղութենէ զանձն իւր:

Լաւ է անուն բարի քան զմեծութիւն բազում, եւ քան զարծաթ եւ զոսկի՝ շնորհ բարիք:

Աղքատք տիրեսցեն մեծատանց, եւ ծառայք տերանց իւրեանց փոխ տայցեն:



1923

## ՅՈՒՆՎԱՐ (31 Օր)

Գ.Ձ. 1. ԲՇ. Տօն Սրբոց Հյրպտցն. Իգնատիոսի, Ադդէի եւ Մարութայի Եպսին:— ՏԱՐԵՄՈՒՏ ԵՒ ԿԱՂԱՆԴ 1923 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ:

Գ.Կ. 2. ԳՇ. Տօն Սրբոյն Թէոպոմպայ Եպսին. եւ Թէոնայ վկային եւ Չորից Զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիքի եւ Բասիլիդեայ:

Դ.Ձ. 3. ԴՇ. Պահք:

Դ.Կ. 4. ԵՇ. Տօն Սրբոց Կուսանացն Ինդոսի եւ Դոմնայի եւ Գղերիկոսի Քհյին., եւ Երկուց Բիւրուցն, որք այրեցան յԵկեղեցին Նիկոմիդացւոց:

Ա.Ձ. 5. ՈՒՐԲ. Պահք:— Երեկոյին Նախատօնակ:

Ա.Կ. 6. ՇԲ. Սկիզբն Աւագ Տօնից:— Ա. Տօն՝ Սրբոյն Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Առաքելոյն: Օրհ. Դ.Ձ. Յաղթող գտաւ, իւր սարօքն:

Բ.Ձ. 7. *ԿԻՐ. Հինգերորդ՝ Յիսնակաց: Հարց՝ Գ.Կ. Նախայաւիտեան: Հմբրծ. Այսօր զուարճացան:— Երեկոյին Նախատօնակ:

Բ.Կ. 8. ԲՇ. Բ. Տօն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ Առաջին Մարտիրոսին: Օրհ. Գ.Կ. Նահատակ բարի, իւր սարօքն: — Երեկոյին Նախատօնակ:

Գ.Ձ. 9. ԳՇ. Գ. Տօն Սրբոց Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Օրհ. Դ.Ձ. Յնծայ այսօր, իւր սարօքն:

Գ.Կ. 10. Դ.Ճ. Պահք:— Երեկոյին Նախատօնակ:

Գ.Ձ. 11. ԵՃ. Դ. Տօն Սրբոց Որդւոցն Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին: Օրհ. Դ.Կ. Որ էնն յէութեան, խր սարօքն:— Բարեկենդան Ծննդեան:

Գ.Կ. 12. ՈՒՐԲ. Պահք:

Ա.Ձ. 13. ՃԲ. Պահք:— Տօն Սրբոցն Բարսղի Հայրապետին. եւ եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապետին. եւ Արբայ Եփրեմի Խորին Ասորւոց:

Ա.Կ. 14. *ԿԻՐ. Վեցերորդ՝ Յիսնակաց: Հարց՝ Դ.Կ. Միածին Որդի Աստուծոյ: Հմբրձ. Ա.Կ. Հրաշալի գյարութիւն:—ՏԱՐԵՄՈՒՏ ԵՒ ԿԱՂԱՆԴ 1923 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԸՍՏ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ:

Բ.Ձ. 15. ԲՃ. Պահք:

Բ.Կ. 16. ԳՃ. Պահք:

Գ.Ձ. 17. ԴՃ. Պահք:

Գ.Կ. 18. ԵՃ. Նաւակատիք: Ճրագալոյց Ծննդեան Քրիստոսի:

—o—

*Մի՛ փոխեր զսահմանս յաւիտենականս զոր եդին հարք քո:*

*Կարաս ծակ է տուն օտար, եւ ջրհոր նեղ՝ օտարոտին:*

*Առաջնորդութեամբ մղի պատերազմ, եւ օգնականութեամբ խորհրդական սրտի:*

*Անխրատից պատահէ մահ, եւ մեռանի անզգամ ի մեղս:*



## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

•

Ակնարկ մը Հոգեւոր Իշխանութեան Կազմակերպութեան վրայ Սկիզբէն մինչեւ մեր Օրերը

Հայաստան առաջին անգամ աւետարանուեցաւ ԹԱԴԷՈՍ եւ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ Առաքեալներու ձեռքով, 50--68 տարիներու ընթացքին:

Այս երկու Առաքեալներու աշխատութիւնը հիմ եղաւ Հայաստանի Քրիստոնէացման: Հայ Թագաւորութիւնը գրեթէ երկու հարիւր տարի հալածեց Նոր Կրօնքը. բայց հակառակ այս հալածանքին, չմարեցաւ Աւետարանին լոյսը, եւ նոյն իսկ կազմուեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյն Եպիսկոպոսութիւնը, որոնց վերջինը Մեհրուժան (230--260) ծանօթ է միջեկեղեցական Պատմութեան ալ:

Սուրբ Գրիգոր ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ (302–325) կանոնաւոր եւ հաստատակամ աշխատութեամբ ՄԵԾՆ եւ ՍՈՒՐԲ ՏՐԴԱՏ ընդունեցաւ Քրիստոնէութիւնը եւ պետական կրօնք հռչակեց զայն:

Քրիստոնէութիւնը եռանդով մշակուեցաւ Հայաստանի սահմաններուն մէջ, թէեւ ոչ առանց դժուարութեան, մինչեւ որ հայացաւ եւ եղաւ Հայ-Քրիստոնէութիւն:

Այս աշխատութեան նուիրուեցան Հայաստանի անթիւ եւ անհամար վանքերն ու մենաստանները, եկեղեցիները, իրենց դպրոցներով եւ բիւրաւոր գործիչներու նուիրեալ գործունէութեամբ: Եւ ի՜նչ գործունէութիւն. մտքով, խօսքով, կեանքով, կենցաղով եւ գրչով:





Հոգեւոր իշխանութիւնը հակեց այս համատարած աշխատութեան վրայ, առաջնորդեց առանց՝ քաղաքական իշխանութեան հզօր պաշտպանութեամբ եւ գործակցութեամբ:

Դարերու ընթացքին Հայաստանի քաղաքական իշխանութիւնը ունեցաւ իր բեկումներն ու բեկբեկումները, իր թափառումները, եւ Հայաստանի Եկեղեցւոյն Հոգեւոր Իշխանութիւնը չլքեց զայն: Անոր բախտակից եւ վիճակակից եղաւ. եւ եթէ օր մը կորաւ Հայ Ազգին Գահն ու Թագը, բայց Հայոց Եկեղեցին պահեց իր Աթոռն ու Գաւազանը, իր վրայ կրելով եւ բերելով ազգային քաղաքական կեանքին եւ իշխանութեան բեկմանց եւ բեկբեկմանց բոլոր հետքերը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աթոռը, սկսելով Էջմիածնէն, փոխադրուեցաւ տեղէ տեղ եւ բոլոր Հայաստանի եւ Կիլիկիոյ շրջանն ըրաւ, հետքեր եւ յաջորդութիւններ թողլով այդ բոլոր վայրերու եւ տեղերու մէջ:

Այս է պատճառը, որ անցեալ դարու վերջը՝ դեռ երեք Կաթողիկոսական Աթոռներ ունէր Հայաստանի Եկեղեցին, ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, Առաջին եւ Մայր Աթոռ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան. ի ՍԻՍ, յիշատակ Կիլիկիոյ Ռուբինեանց Թագաւորութեան եւ Շնորհալիներու ծաղկեալ եւ արծաթացեալ հոգեւոր իշխանութեան. եւ յԱՂԹԱՄԱՐ, այլ յիշատակ մը Արծրունեաց Թագաւորութեան, Վանայ Ծովուն բանաստեղծական ջուրերուն պատնէշին եւ պաշտպանութեան տակ:

Ժամանակներ եւ քաղաքական նորագոյն

կազմակերպութեանց հարկեր՝ ծնունդ տուին Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգեւոր Իշխանութեան երկու օժանդակ շառաւիղներուն, որոնց առաջինն է Երուսաղեմի Հայկական Պատրիարքութիւնը, իսկ երկրորդը՝ Կ. Պոլսոյ «Թիւրքիոյ» Հայոց Պատրիարքութիւնը:

Առաջինը, իր առաքելական հիմնարկութեան առնչութեամբ, միջազգային կարեւորութիւն ստացաւ հետզհետէ եւ կեդրոն եղաւ Հայոց բարեպաշտական մշակոյթին եւ մասամբ եւս կրթական եւ մատենագրական շարժման:

Երկրորդը բոլորովին նոր կազմակերպութիւն մըն էր, արդիւնք Բիւզանդական Կայսրութեան կործանման եւ հաստատութեան Օսմանեան պետութեան: Այս նոր Պատրիարքութիւնը հետզհետէ տէր եղաւ քաղաքական որոշ իրաւասութեանց, եւ վերջապէս Ազգային Սահմանադրութեամբ «Թիւրքիոյ» Հայոց համար եղաւ տեսակ մը տէմօկրաթիք ներքին կառավարութիւն՝ Թիւրք միապետութեան կամ բռնապետութեան սահմաններուն մէջ:

Էջմիածին, իբրեւ Մայր Աթոռ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հոգեւորական, վարչական, կրթական, մատենագրական ահագին նշանակութիւն ունի, ինչպէս մեր ազգային պատմութեան, նոյնպէս մեր ազգային եւ եկեղեցական կեանքին մէջ:

Էջմիածնի Աթոռը փառաւորուած է այնպիսի անձնաւորութիւններով, որոնք ոեւէ մեծ ազգի պատիւ պիտի բերէին իրենց ծա-



գումով, իրենց անձնական արժանիքով, իրենց բարձր եւ բազմակողմանի կարողութիւններով, ինչպէս նաեւ իրենց կատարած մեծագործութիւններով եւ իրենց ծառայութեանց մշտնջենաւոր եւ յաւէտ պանծալի արդեամբք:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն (302) մինչեւ Գէորգ Ե., Ամենայն Հայոց արդի Վեհափառ Հայրապետը, ՀԱՐԻՒՐ ՅԻՍՈՒՆ ԻՆԸ օրինաւոր Կաթողիկոսներ կոչուած են այդ վեհագոյն պաշտօնին:

Կիլիկիոյ Աթոռը բարձրացած են Գրիգոր Թ. Մուսաբէկեանէն (1439) մինչեւ Սահակ Բ., Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Հայրապետը, ՔԱՌԱՍՈՒՆԷ աւելի Կաթողիկոսներ:

Աղթամարայ Աթոռին կոչուած են Դաւիթ Ա. Թոռնիկեանէն (1113) մինչեւ Խաչատուր Գ. Շիրօեան (1864-1895), ՔԱՌԱՍՈՒՆ ՈՒԹԸ Կաթողիկոսներ, եւ այլ եւս խափանած է յաջորդութիւնը:

Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը ունեցած է ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԻՆԸ Պատրիարք՝ Աբրահամ Ա.էն (637-669) մինչեւ Վեհապետեան Յարութիւն Արքեպս. (1885-1910): Եւ տասը տարիներէ ի վեր կարելի չէ եղած նոր ընտրութիւն կատարել:

Իսկ այս տարի, իբրեւ արդիւնք Մեծն Բրիտանիոյ գերիշխանութեան բարերար ազդեցութեան, Ս. Յակոբ ալ մտաւ նոր շրջանի մը, եւ Կ. Պոլսի նախկին Պատրիարք Ամեն. Եղիշէ Արքեպս. Դուրեան, կոչուեցաւ



ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.
Կաթողիկոս Ամենայն Հայոց



*Երուսաղէմի Հայ պատրիարքութեան թէ՛ Ս. Ցակոբայ Միաբանութեան եւ թէ՛ Կ. Պոլսի Ազգային Երեսփոխանական Ժողովոյ ընտրութեամբ:*

*Կ. Պոլսի Պատրիարքական Աթոռը ունեցած է ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ՈՒԹԸ Պատրիարք՝ Յովակիմ Ա.էն (1461-1478) մինչեւ Զաւէն Արքեպիսկոպոս, արդի Ս. Պատրիարքը:*

*Հայ Ազգի այսօրուան ճակատագրին հետ, իր Եկեղեցւոյն Հոգեւոր վերին իշխանութիւնն ալ տագնապեցաւ եւ կոտրատուեցաւ համաշխարհային պատերազմին հետեւանքով:*

*Եւ* Երեք Աթոռներ, *որ իրենց ընտրեալ Գահակալներն ունէին, Հայ Ազգի հետ մատնուեցան դաժան տագնապներու:*

*Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Տ. Տ. Գէորգ Ս. Կաթողիկոս, որ 1912ին բարձրացաւ Լուսաւորչի Աթոռին, իր ժողովրդեան բեկումը տեսնելէ ետք՝ 1915ին, արժանի եղաւ օրհնել Հայաստանի նորածին Հանրապետութեան՝ 1918ին:*

*Կիլիկիոյ Շնորհազարդ Հայրապետը, Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոս, որ 1902ին կոչուեցաւ այդ բարձր պաշտօնին, տարագիր եղաւ Կիլիկիոյ Հայութեան հետ, եւ ատեն մը Ժէօն-Թիւրք կառավարութեան ազգակործան կարգադրութեամբ ստիպուեցաւ մնալ Երուսաղէմի Վանքին մէջ իբրեւ Կաթողիկոս-Պատրիարք, եւ այդ յիմար Կառավարութեան տապալումէն ետքը, վերադարձաւ Կիլիկիա, իր Կաթողիկոսական իրաւասութեամբ. ապա այցելեց Եւրոպա, ի նպաստ մեր Ազգային*



ԱՄԵՆ· ԶԱՒԷՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ



Դաւին, եւ առեն մը Սուրիոյ եւ Լիբանանու մէջ սպասել էտքը՝ վերադարձաւ Ատանա, աշխատելու համար Կիլիկիոյ ազատագրութեան եւ վերաշինութեան գործին:

Կ. Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարքը, Տ. Զաւէն Սրբազան, որ 1913ին ընտրուեցաւ, մինչեւ Պաղտատ, Մուսուլ տարագրուեցաւ Ժէօն-Թիւրք կառավարութեան կողմէ, որպէս զի ջնջուի Կ. Պոլսի Պատրիարքութիւնը եւ չլսուի բողոքի ձայն բարձրացնող մը Հայկական Հալածանաց դէմ՝ Սուլթաններու մայրաքաղաքին մէջ:

Այս միջոցին էր, որ Ժէօն-Թիւրք կառավարութեան կարգադրութեամբ, Կ. Պոլսի Պատրիարքութիւնը պահ մը միաւորուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ, եւ, ինչպէս որ գիտել տուինք վերեւ, Կիլիկիոյ Հայրապետը՝ Կաթողիկոս-Պատրիարք հռչակուեցաւ Երուսաղէմի մէջ, ուր իրապէս կը ջնջուէին Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Կ. Պոլսի Պատրիարքութիւնը, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսական իշխանութիւնը Թիւրքիոյ Հայոց վրայ:

Բարեբախտաբար ջախջախուեցաւ Թիւրքիա՝ Գերմանիոյ հետ. Դաշնակից Պետութիւնք կտոր կտոր ըրին զայն. Կ. Պոլիս մըտաւ Դաշնակիցներու վարչութեան ներքեւ, եւ շնորհիւ Մեծն Բրիտանիոյ իմաստուն քաղաքականութեան՝ վերահաստատուեցաւ Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը, Զաւէն Պատրիարք Անգլիական զրահաւորով մը եւ յաղթական փառքերով բերուեցաւ Կ. Պոլիս,

եւ վերաբազմեցաւ իր Աթոռը: Ապա անցաւ Եւրոպա, աշխատեցաւ Ազգային Դատին յաջողութեան համար եւ վերադարձաւ Կ. Պոլիս շարունակելու համար իր ազգախնամ հոգածութեան անհատնում գործը:

***

Հայ Ազգը, վերջին հնգամեայ աննկարագրելի հալածանքներէն եւ անտանելի տառապանքներէն ետքը, պէտք ունի իր Եկեղեցւոյն եւ իր հոգեւոր կեանքին վերաշինութեան, ըլլայ Մայր–Հայրենիքի, ըլլայ Հայ Գաղթավայրերու մէջ, այս լայներու դարուն պահանջմանց չափով ու կերպով:

Եւ այս վերաշինութեան մէջ առաջնորդող եւ կատարող դեր մը ունին Հոգեւոր Իշխանութեան Կեդրոնները՝ Մայր Աթոռէն մինչեւ Կ. Պոլիս եւ Կիլիկիայէն մինչեւ Երուսաղէմ:

## ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵՆԷՆ

### Թեմակալ Հովիւներ

Յօդուած 15.— *Թեմակալ Հովուաց պարտաւորութիւններն են.*

*Ա. Քարոզել եւ ուսուցանել՝ բանիւ եւ գրով՝ Քրիստոնէական հաւատոյ եւ բարոյականի ուսումը:*

*Բ. Մատակարարել Եկեղեցւոյ Ս. Խորհուրդները իրենց խնամոց յանձնուած հօտին:*



*Գ. Հայթայթել միջոցներ Մայրենի լեզուի, Եկեղեցական եւ Ազգային Պատմութեանց ուսուցման:*

*Դ. Յաճախակի այցելութեամբ մխիթարել հիւանդները, աղքատները, սգաւորները, եւ այլ՝ որոց պէտք են՝ յորդոր, խրատ եւ քաջալերութիւն:*

*Ե. Խրախուսել իրենց թեմերու մէջ գտնուած բարենպատակ ընկերութիւնները, մանաւանդ զանոնք՝ որոնց կանոնագրերը վաւերացուած կը լինին Առաջնորդարանէն, կամ իրենց գտնուած թեմի հովուութենէն եւ պարբերաբար համարատու կը լինին յիշեալ պաշտօնէութեանց:*

*Զ. Ունենալ իրենց թեմերու Եկեղեցւոյ զաւակաց անձնահամարի արձանագրութիւնը եւ անոնց տարեկան եկեղեցական ցուցակը:*

*Է. Ունենալ առանձին վիճակագիր մկրտելոց, պսակելոց եւ ննջեցելոց, եւ ամէն երեք ամիս՝ ղրկել զայնս Առաջնորդարան:*

*Ը. Հսկել ճշդիւ գործադրութեան Թեմական Կանոնագրին, գանձային հաշուոյ կանոնաւորութեան եւ ժողովներու որոշմանց կանոնաւոր արձանագրութեանց, զորս պարտին վաւերացունել, ի բաց առեալ այն պարագային՝ երբ առուած որոշում մը օրինաց հակառակ կը նկատեն, այն ատեն իրենք ձեռնպահ կը մնան եւ կը տեղեկագրեն Առաջնորդին:*

*Թ. Իրենց Թեմին վերաբերեալ շրջակայ տեղերու ժողովրդեան այցելել պարբերաբար՝ ըստ Թեմական Կանոնագրին, եւ չթողուլ զայնս առանց հոգեւոր մխիթարութեան:*

Ժ. Ջանալ հաշտարարութեամբ կարգադրել անոնց մէջ ծագած վէճերը։

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ

Յօդուած 59.— *Իւրաքանչիւր Թեմի կեդրոնի Հոգաբարձութեան պաշտօնն է՝ պարբերաբար գումարուելով նախագահութեամբ Հովուին,*

Ա. Հոգ տանիլ ամէն Կիւրակի եկեղեցական պաշտամանց անխափան կատարմանց։

Բ. Յատուկ դպրաց դաս կազմելով՝ հըսկել երգեցողութեանց կանոնաւորութեան եւ ներդաշնակութեան։

Գ. Հոգ տանիլ Եկեղեցական տրոց գանձման։

Դ. Ջանալով կարգադրել ժողովրդեան մէջ պատահած վէճերը հաշտարարութեամբ։

Ե. Ըստ կարելւոյն մխիթարել աղքատները եւ կարօտեալները՝ կազմելով մարմին մը՝ որ աշխատի հայթայթել օժանդակութեան միջոցներ կարօտելոց համար։

Զ. Մատակարարել Եկեղեցւոյ նիւթական պէտքերը եւ Թեմական Ժողովի կազմած տարեկան ելեւմտացոյցին համեմատ՝ վճարել Առաջնորդարանի Թեմական Հովուի եւ ուրիշ Եկեղեցական պաշտօնէից թոշակները։

Է. Ջանալ Եկեղեցւոյ գանձին վիճակը բարուոքել։

Ը. Մայրենի լեզուի զարգացման փոյթ տանիլ եւ քաջալերել այդ նպատակին ծառայող ձեռնարկները։



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## ԱՌԱՋՆՈՐԴ

## Գեր. Տ. Տիրայր Եպ. Տէր Յովհաննէսեան

### 1921 ՕԳՈՍՏՈՍ 21-ԻՆ ՈՒՍՏՐ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ

1 Բարգէն Եպս. Կիւլէսէրեան՝ Նիւ Եորք։
2 Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան՝ Պօսթօն։
3 Աթիկ Քհնյ. Ծոցիկեան՝ Ուստր։
4 Յակոբ Վրդ. Մխիթարեան՝ Լօվէլ։
5 Ղեւոնդ Վրդ. Մարգուկէսեան՝ Փրավիտէնս։
6 Սերովբէ Քհնյ. Ներշապուհ՝ Նիւ Եորք։
7 Սահակ Վրդ. Նազարէթեան՝ Տիթրօյիթ։
8 Ատոմ Քհնյ. Մելիքեան՝ Լօս-Անճէլըս։
9 Սամբրէ Քհնյ. Փէլթէկեան՝ Նիւ Պրիթէյն։
10 Ա. Նազար (վասն Վարդան Վրդ. Գասպարեանի) Ֆրէզնօ։
11 Կարապետ Կիրակոսեան՝ Լօվէլ։
12 Մարտիրոս Պալեան՝ Լօրէնս։
13 Սեդրակ Տէր-Պաղտասարեան՝ Ուստր։
14 Յակոբ Պալեան՝ Ուստր։
15 Յովհաննէս Պիլէզէրեան՝ Ուստր։
16 Գարեգին Երկանեան՝ Նիւ Եորք (27րդ փողոցի Եկեղեցւոյ կողմէն)։
17 Հ. Ս. Հողկրողեան՝ Նիւ Եորք (27րդ փողոցի Եկեղեցւոյ կողմէն)։



ԳԵՐ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



18 Ճէյմս Պարտիզակցի՝ Նիւ Եորք (27րդ փողոցի Եկեղեցւոյ կողմէն)։
19 Տօքթ. Ս. Արդարեան՝ Նիւ Եորք (27րդ փողոցի Եկեղեցւոյ կողմէն)։
20 Տիգրան Սմսարեան՝ Վէսթ Հօպօքըն։
21 Գարեգին Գէորգեան՝ Նիւ Պրիթէյն։
22 Գաբրիէլ Գապանճեան՝ Թրօյ։
23 Կիրակոս Քէլէշեան՝ Շիքակօ։
24 Աւետիս Սէլեան՝ Շիքակօ։
25 Ղազար Տիրանեան՝ Շիքակօ։
26 Սարգիս Ոստիկեան՝ Լօս-Անճէլըս։
27 Մարկոս Տէր-Մանուէլեան՝ Ֆրէզնօ։
28 Մաղաք Պէրպէրեան՝ Ֆրէզնօ։
29 Լեւոն Սէլեան՝ Պօսթօն։
30 Փօլ Պետրոսեան՝ Պօսթօն։
31 Աւետիս Զաքարեան՝ Պօսթօն։
32 Ղազար Տէր-Մանուէլեան՝ Պօսթօն։
33 Յովսէփ Եշիլեան՝ Պօսթօն։
34 Լեւոն Եսայեան՝ Պօսթօն։
35 Յարութիւն Կարապետեան՝ Փրավիտէնս։
36 Պօղոս Ճօրճօրեան՝ Փրավիտէնս։
37 Սարգիս Նաճարեան՝ Փրավիտէնս։
38 Յարութիւն Խալաճեան՝ Հարթֆըրտ։
39 Տօքթ. Փառնակ Ադամեան՝ Սիրաքիւզ։
40 Թադէոս Քիւփէլեան՝ Նիւ Եորք (17րդ փողոցի Եկեղեցւոյ կողմէն)։
41 Արմէն Բոցիկեան՝ Նիւ Եորք (17րդ փողոցի Եկեղեցւոյ կողմէն)։
42 Գարեգին Եազըճեան՝ Նիւ Եորք (17րդ փողոցի Եկեղեցւոյ կողմէն)։
43 Տիգրան Վիշապազուն՝ Նիւ Եորք (17րդ փողոցի Եկեղեցւոյ կողմէն)։

44 *Մուշեղ Պէյլէրեան՝ Նիւ Եորք (17րդ փողոցի եկեղեցւոյ կողմէն)։*

## ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ ԱՆԴԱՄՆԵՐ

*Տ. Բարգէն Եպս. Կիւլէսէրեան՝ Ատենապետ*
*Տ. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան՝ Ատենադպիր*
*Տ. Ղեւոնդ Վրդ. Մարդուկէսեան*
*Տ. Յակոբ Վրդ. Մխիթարեան*
*Տ. Աթիկ Քհնյ. Ծոցիկեան*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ ԱՆԴԱՄՆԵՐ

*Աւետիս Սելեան՝ Ատենապետ*
*Մաղաք Պէրպէրեան՝ Ատենադպիր*
*Սեդրաք Տ. Պաղտասարեան՝ Գանձապետ*
*Մարկոս Տ. Մանուէլեան*
*Սարգիս Նաճարեան*
*Առաջնորդարանի Քարտուղար*

Տ. Աթիկ Քհնյ. Ծոցիկեան

## ՈՒՍՏՐԻ ԹԵՄ

Առաջնորդանիստ քաղաք, Ուստր

Ուստր, Ուայթնսվիլ, Միլֆըրտ, Ֆիչպըրկ, Հըտսըն

Սեփական եկեղեցի Ս. Փրկիչ, շինեալ 1896ին
Հովիւ Տ. Աթիկ Քհնյ. Ծոցիկեան
*Հասցէ՝* 65 Laurel Ss., Worcester, Mass.
Դպրապետ Յ. Գասպարեան եւ Հ. Մումճեան





Ս. Փրկիչ, Առաջին եւ Առաջնորդանիստ եկեղեցի Ուստրի

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Սեդրակ Տէր Պաղտասարեան՝ Ատենապետ, Մարտիրոս Տիրանեան՝ Բ. Ատենապետ, Կարապետ Թաշճեան՝ Ատենադպիր, Գեղամ Միքրոյեան՝ Բ. Ատենադպիր, Սարգիս Կուլիկեան՝ Գանձապետ, Յակոբ Երէցեան, Յովհաննէս Նաճեան, Յովակիմ Մանթարեան, Նազարէթ Նաճեան, Մինաս Գաբրիէլեան, Եղիա Գասապեան:*

Վիճակ Ազգային Դպրոցի

*Թիւ ուսուցչաց՝ հինգ:*
*Երկսեռ աշակերտք՝* 175:
*Տարեկան ծախք՝* 400 *տոլար:*
*Յունվար* 1, 1921*էն սկսեալ տեղի է ունեցած* 72 *մկրտութիւն,* 91 *պսակ եւ* 14 *թաղում:*

Միլֆորտ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Սարգիս Քաջիկեան՝ Ատենապետ, Արամ Քարաթէքէեան՝ Գանձապետ, Յակոբ Պալեան՝ Ատենադպիր, Աւետիս Յովհաննէսեան, Մարտիրոս Աղաճանեան:*
Ազգային Դպրոցի վիճակ
10 *հատ աշակերտ:*
*Հասցէ՝* 7 West Pine St., Milford, Mass

ՈՒԱՅԹՆՍՎԻԼԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Պետրոս Համամճեան՝ Ատենապետ, Ղեւոնդ Տէր Մարկոսեան՝ Ատենադպիր, Գրիգոր Գա-*





Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցի Ֆրէզնոյի

շանճեան՝ Գանձապահ, Գրիգոր Համբակում-
եան, Յարութիւն Համբարձումեան:

## ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԹԵՄ

### Ֆրէզնօ եւ շրջակայք

Սեփական Եկեղեցի Ս. Երրորդութիւն
Հովիւ՝ Բարձր. Տ. Վարդան Ծ. Վրդ. Գաս-
պարեան:

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Մարտիրոս Ալէմեան՝ Ատենապետ, Հեթում Գարիկեան՝ Ատենադպիր, Յակոբ Ռոտիկեան՝ Գանձապահ, Կարապետ Գ. Գասպարեան, Կարապետ Ալչուճեան, Միհրան Ջաթօեան:*

### Վինակ Ազգային Դպրոցի

Ուսումն. խորհուրդ
*Մկրտիչ Խօլլիկեան՝ Ատենապետ, Խոսրով Էլ-
մասեան՝ Ատենադպիր, Վահան Նշկեան՝
Գանձապահ, Յակոբ Թէրզեան, Աշոտ Երէց-
եան:*
*Թիւ ուսուցչաց չորս:*
*Երկսեռ Աշակերտք* 250:
*Տարեկան ծախք* 1600 *տոլէր:*
*Ամուսնութիւն* 54, *մկրտութիւն* 76, *մահ* 33:
*Հասցէ՝* P. O. Box 290, Fresno, Calif.



## ԵԴԵՄ

Սեփական Եկեղեցի Ս. Աստուածածին

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Մկրտիչ Թուզմանեան՝ Ատենապետ, Միհրան
Թէրզեան՝ Ատենադպիր, Խաչիկ Կարապետ-
եան՝ Գանձապետ, Տիգրան Իսկէնտէրեան,
Արմենակ Սիմոնեան, Մարտիրոս Փիլոյեան,
Յովհաննէս Նազարէթեան:*
*Հասցէ՝* Mr. M. Terzian, Yettem, Calif.
*Տեղի ունեցած են* 10 *պսակ*, 4 *մկրտութիւն*
*եւ* 1 *մահ:*

## ՇԻԳԱԿՕԻ ԹԵՄ

Ուէսթ փուլմըն, Ուօքեկն, Սաութ Միլուօ-
քի, Րէյսին, Քինօշա
*Հովիւ Տ. Եղիշէ Քհնյ. Գալչընճեան:*
*Հասցէ՝* 4407 Greenwood Ave., Chicago, Ill.

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Սմբատ Մուրատեան՝ Ատենապետ, Խորէն
Ծահպազեան՝ Բ. Ատենապետ, Վահան Նա-
ճարեան՝ Ատենադպիր, Լութֆիկ Կիւլեան՝
Գանձապահ, Տքթր. Յ. Գասպեան՝ Հաշուա-
կալ, Աւետիս Արամեան, Արշակ Զէլէպեան:*

## ՈՒԷՍԹ ՀՕՊՕՔԸՆԻ ԹԵՄ

Ուէսթ Հօպօքըն, Հօպօքըն, Եունիըն Հիլլ,
Վիհօքըն, Ուէսթ–Նիւ–Եորք, Ճըրզի Սիթի,
Նիւ Արք, Փէթըրսըն, Սմիթի
Սեփական Եկեղեցի Ս. Խաչ:
Հովիւ Բարձր. Տ. Վահրամ Ծ. Վրդ. Նազա-
րէթեան:
Աւագ Սարկաւագ Յովսէփ Թոնամեան:



Ս· Խաչ Եկեղեցի Ուէսթ Հօպօքընի



Մկրտիչ Գալայճեան՝ Ատենապետ, Յարութիւն Գարակէօզեան՝ Ատենադպիր, Սարգիս Մահմարեան՝ Գանձապետ, Յովհաննէս Հէքիմեան, Յակոբ Պօղոսեան, Յակոբ Ապահունի, Տիգրան Սմսարեան, Պետրոս Մուրատճանեան, Պօղոս Դանիէլեան:
Հասցէ՝ P. O. Box 14, W. Hoboken, N. J.
Ունի Ազգային Դպրոց, ուր կը յաճախեն 120 աշակերտ որոնց 80ը աղջիկ եւ 40ը մանչ:
Տարեկան ծախք 1500 տոլէր:
Զորս ամսուան մէջ տեղի են ունեցած 14 պսակ, 5 մկրտութիւն եւ 3 մահ:

ՔԸՆՆԷԹԻՔԸԹԻ ԹԵՄ
կազմուած **1920**ին
Հարթ-ֆըրտ, Նիւ-Պրիթէյն, Նիւ-Հէյվըն, Թամսընվիլ, Սփրինկֆիլտ եւ Ինտիանա Օրչըրտ
Հովիւ Տէր Մամբրէ Քհյ· Փէլըքէկեան
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՆԻՒՊՐԻՅԷՅՆԻ
Հասցէ՝ 178 Tremont St.,
New-Britain, Conn.

ՀԱՐԹՖԸՐՏ
Միհրան Գզիրեան՝ Ատենապետ, Յարութիւն Խալաճեան՝ Ատենադպիր, Գէորգ Տ· Սարգիսեան՝ Գանձապահ, Աւետիս Սանփանեան, Գէորգ Ոստիկեան:
Հասցէ՝ 223 Ward St., Hartford, Conn.

ԹՐՈՅ-ՎՕԹԸՐՎԸԼԻՏԻ ԹԵՄ
Սեփական Եկեղեցի Ս· Պետրոս:
Հովիւ Տէր Պետրոս Քհյ· Վարդանեան:



Սուրբ Պետրոս Եկեղեցի
Թրոյ–Ուօթըրվլիէթի



## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Մեսրոպ Փաստեան՝ Ատենապետ, Մինաս Կ. Հայրապետեան՝ Ատենադպիր, Ասատուր Գինոսեան՝ Գանձապահ, Գաբրիէլ Գաղանճեան՝ Բ. Ատենապետ, Յարութիւն Ճափարեան՝ Բ. Ատենադպիր, Ճիհան Գույումճեան, Կարապետ Սողոեան:*

*Հասցէ՝* M. G. Hairabedian, P. O. Box 13,
Troy, N. Y.

Դպրոցական վիճակ
*Ազգային Դպրոց ունի Վօթըրվլիէթ, 16 Աղջիկ եւ 13 Մանչ կը յաճախեն:*
*Ազգային Դպրոց ունի Թրոյ, 11 Աղջիկ եւ 7 Մանչ կը յաճախեն:*
*Ուսուցիչ Պրն. Արամ Երէցեան:*
*Մէկ տարուայ մէջ տեղի ունեցած է 4 Մկրտութիւն, 3 Պսակ եւ մէկ Մահ:*

## ՆԻՒ ԵՈՐՔԻ ԹԵՄ

Նիւ Եորք, Պրուքլին, Պրօնքս, Եանքրս,
Պինկհէմթըն, Պրինփորթ

*Նիւ Եորք ունի երկու Եկեղեցի, երկուքն ալ Ս. Գրիգոր Լուսաւորիչ:*
*Առաջինը 27րդ Փողոցի մէջ, նախ վարձուած 1914ին, յետոյ սեփականել 1920ին, Երկրորդը 17րդ Փողոցի վրայ, վարձուած 1918ին:*
*Եկեղեցի Նիւ Եորքի 27րդ Փողոց, Քարոզիչ Բարձր. Տ. Յովհան Ծ. Վրդ. Կարապետեան, Հովիւ Տէր Սերովբէ Քհնյ. Ներշապուհ:*

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Հ. Հովկրողեան՝ Ատենապետ, Ճէյմս Պարտիզակցի՝ Բ. Ատենապետ, Գ. Երկանեան՝ Ատենադպիր, Նշան Կարապետեան՝ Բ. Ատենադպիր, Գ. Տէր Պալեան՝ Գանձապետ, Յարութիւն Գալճեան, Ա. Աբրահամեան, Փ. Ծահպուտաղեան, Կ. Մուրատեան։*
*Հասցէ՝* St. Illuminator's Arm. Church, 221 East 27th St. New York City.
*Ունի Ազգային Դպրոց, ուր կը յաճախեն* 80*ի չափ Աշակերտներ,* 46 *Մանչ եւ* 34 *Աղջիկ։*
*Տարեկան ծախք մօտ* 1000 *տալէր։*
*Ութ ամսուայ մէջ տեղի է ունեցած* 80 *Պսակ,* 40 *մկրտութիւն եւ* 12 *մահ։*

## ՆԻՒ ԵՈՐՔԻ ԹԵՄ

### Եկեղեցի 17րդ փողոցի

Քարոզիչ Գեր. Տ. Բաբգէն Ս. Եպս. Կիւլէսէրեան։
*Առժամանակեայ Հովիւ՝ Տ. Ազարիա Քհնյ. Պօյաճեան։*
*Թագւոր Քիւփէլեան՝ Ատենապետ, Ա. Պարտիզպանեան՝ Բ. Ատենապետ, Ն. Մաղաքեան՝ Ատենադպիր, Հ. Վարդանեան՝ Բ. Ատենադպիր, Գ. Եազըճեան Գանձապետ, Ս. Պարգեւ՝ Քարտուղար, Վ. Քիւրքճեան, Ա. Բոցիկեան, Յ. Ալպարեան։*
*Հասցէ՝* 337 East 17th St., New York City.





Սրբոց Թարգմանչաց Եկեղեցի Փրավիտէնսի

## ՓՐԱՎԻՏԷՆՍԻ ԹԵՄ

Փաւթաքէթ, Սէնթրէլ Ֆոլս, Ուսսաքէթ Սեփական եկեղեցի, Սրբոց Թարգմանչաց: Հովիւ Բարձր. Տ. Ղեւոնդ Վրդ. Մարդուկէսեանի:

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Յարութիւն Կարապետեան՝ Ատենապետ, Սարգիս Յ. Նազարեան՝ Ատենադպիր, Սարգիս Մորլեան՝ Գանձապահ, Նշան Փաշալեան, Պօղոս Ճորճորեան, Միսաք Սողիկեան, Կարապետ Ենովքեան, Խաչատուր Մանկունի, Յարութիւն Կարապետեան, Սարգիս Նորիկեան, Ռուբէն Պէրպէրեան:*

*Հասցէ՝* Armenian Apostolic Church,
Jefferson St., Prov. R.·I.

## ԼՕՎԷԼԻ ԹԵՄ

Լօվէլ, Լօրէնս, Հէյվըրհիլ, Մէնչէսթըր, ·Բանքըրտ, Նիւ Պրիփորթ, Նիւ Հէյվըն
Հովիւ Բարձր. Տ. Յակոբ Վրդ. Մխիթարեան

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԼՕՎԷԼԻ

*Մկրտիչ Գազանճեան՝ Ատենապետ, Կարապետ Կիրակոսեան՝ Ատենադպիր, Մարկոս Տ. Մանուէլեան՝ Գանձապահ, Տօնապետ Գազանճեան, Նազար Մուշեղեան, Սրապ Արոյեան, Մերկերոս Ահարոնեան:*

*Հասցէ՝* 337 High St., Lowell, Mass.





Սրբոց Վարդանանց Զօրավարաց եկեղեցի Լօվէլի

## ՓՐԱՎԻՏԷՆՍԻ ԹԵՄ

Փութաքէթ, Սէնթրէլ Ֆոլս, Ուսնսաքէթ
Սեփականն Եկեղեցի, Սրբոց Թարգմանչաց:
Հովիւ Բարձր. Տ. Ղեւոնդ Վրդ. Մարդուկէս-
եան:

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Յարութիւն Կարապետեան՝ Ատենապետ, Սարգիս Յ. Նաճարեան՝ Ատենադպիր, Սարգիս Մորլեան՝ Գանձապահ, Նշան Փաշալեան, Պօղոս Ծորճորեան, Միսաք Սողիկեան, Կարապետ Ենովքեան, Խաչատուր Մանկունի, Յարութիւն Կարապետեան, Սարգիս Նորիկեան, Ռուբէն Պէրպէրեան:*

*Հասցէ՝* Armenian Apostolic Church,
Jefferson St., Prov. R.·I.

## ԼՕՎԷԼԻ ԹԵՄ

Լօվէլ, Լօրէնս, Հէյվըրհիլ, Մէնչէսթըր,
·Բանֆըրտ, Նիւ Պրիփորթ, Նիւ Հէյվըն
Հովիւ Բարձր. Տ. Յակոբ Վրդ. Մխիթարեան

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԼՕՎԷԼԻ

*Մկրտիչ Գաղանճեան՝ Ատենապետ, Կարապետ Կիրակոսեան՝ Ատենադպիր, Մարկոս Տ. Մանուէլեան՝ Գանձապահ, Տօնապետ Գաղանճեան, Նազար Մուշեղեան, Արամ Արոյեան, Մերկերոս Ահարոնեան:*

*Հասցէ՝* 337 High St., Lowell, Mass.





Սրբոց Վարդանանց Զօրավարաց
Եկեղեցի Լօվէլի

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՔԱՆՔԸՐՏԻ

*Սիմոն Կ. Պօղոսեան՝ Ատենապետ, Առաքել Մանոեան՝ Ատենադպիր, Օհան Գալայճեան՝ Գանձապահ, Յովհաննէս Երանոսեան, Ահարոն Կ. Պօղոսեան:*
*Հասցէ՝* A. Manoian, 173 N. State St.,
Concord, N. H.

## ՍԻՐԱՔԻՒԶԻ ԹԵՄ

Սիրաքիւզ, Իւթիքա, Մեսինա

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Յովհաննէս Էնֆիէճեան՝ Ատենապետ, Վահան Սէֆէրեան՝ Գանձապետ, Ստեփան Նիկաարեան, Յովհաննէս Թիւֆէնկճեան, Քաջբերունի Կոչիկեան:*
*Հասցէ՝* H. Enfiejian, P. O. Box 689,
Syracuse, N. Y.

## ՊՈՍՏՈՆԻ ԹԵՄ

Թեմական քաղաքներն են՝ Պոստոն, Քէյմպրիճ, Չըլսի, Ուօթըրթաուն, Լին, Պրինուօթըր, Պրաքթըն:
Հովիւ՝ Բարձր. Տ. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան:
*Հասցէ՝* 31 Sharon St., Boston, Mass.
Tel. Copley 8237-J
Դպրապետ՝ Տիար Յարութիւն Էքիզեան





Պոսթոնի Հայ Ազգային Եկեղեցին

## ԿԵԴՐՈՆ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՊՈՍՏՈՆԻ

*Լեւոն Սելեան՝ Ա. Ատենապետ, Հմայեակ Հայկէշեան՝ Ա. Ատենադպիր, Միքայէլ Աճէմեան՝ Բ. Ատենապետ, Ղուկաս Արօյեան՝ Բ. Ատենադպիր, Սարգիս Կիւրեղեան՝ Գանձապետ, Աւետիս Ջաքարեան, Ենովք Զուլալեան:*
*Հասցէ Հող. թեան* 854 Washington St.,
Boston, Mass.

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՔԷՅՄՊՐԻՃԻ

*Ղազար Տ. Մանուէլեան՝ Ա. Ատենապետ, Բենիամին Թերճանեան՝ Ա. Ատենադպիր, Յովակիմ Մաղմանեան՝ Բ. Ատենապետ, Ապտալ Պօղոսեան՝ Գանձապետ, Աւագ Աւագեան:*
*Հասցէ Հող. թեան՝* 894 Mass. Ave.
Cambridge, Mass.

## ՉԸԼՍԻԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Հասցէ Հող. թեան՝* 18 Fifth St. Chelsea,
Mass.
*Կարապետ Պաղտասարեան՝ Ատենապետ, Յովսէփ Եէշիլեան՝ Ատենադպիր, Երուանդ Մըսըրլեան՝ Գանձապետ, Եղիա Սարգիսեան՝ Խորհրդական, Բարսեղ Վարդանեան՝ Խորհրդական:*

## ՈՒՕԹՐԹԱՈՒՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Լեւոն Նասյեան՝ Ատենապետ, Թադէոս Մանուկեան՝ Ատենադպիր, Պաղտասար Հրաք-*



*եան՝ Գանձապետ, Տօնապետ Պօղոսեան, Նշան Տ. Պետրոսեան:*
*Հասցէ Հող. թեան՝* 585 Mt. Auburn St.,
E. Watertown, Mass.

## ՊՐԻՃՈՒՕԹԸՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Խաչատուր Վարդապետեան՝ Ատենապետ, Հայկ Սեդրոսեան՝ Ատենադպիր, Մարտիրոս Դաւիթեան՝ Գանձապետ, Ասքանազ Տ. Դաւիթեան, Գէորգ Մուրատեան:*
*Հասցէ Հող. թեան՝* 57 Broad St.,
Bridgewater, Mass.

1921 *Յունվ.* 1— *Օգոստոսէ վերջ Պոստոնի Թեմին մէջ կատարուած է* 39 *մկրտութիւն,* 23*ը մանչ,* 16*ը աղջիկ,* 108 *պսակադրութիւն,* 12 *մահ:*

ԾԱՆՕԹ.— Մնացեալ թեմերը թէեւ Հոգաբարձութիւններ ունին, բայց իրենց ցանկերը չեն հասցուցած:

—o—

*Որպէս մորակ ձիոյ եւ խթան իշոյ, նոյնպէս*
*եւ գաւազան ազգի անմտի:*
*Մի՛ տար պատասխանի անզգամի ըստ նորա*
*անզգամութեանն, զի մի՛ լինիցիս նմա-*
*նող նմա: Այլ տուր նմա պատասխանի*
*անզգամութեան նորա, զի մի՛ իմաստ-*
*նագոյն երեւեսցի յանձն իւր:*

## ԿԵԴՐՈՆ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՊՈՍՏՈՆԻ

*Լեւոն Սելեան՝ Ա. Ատենապետ, Համայեակ Հայէչեան՝ Ա. Ատենադպիր, Միքայէլ Աճէմեան՝ Բ. Ատենապետ, Ղուկաս Արոյեան՝ Բ. Ատենադպիր, Սարգիս Կիւրեղեան՝ Գանձապետ, Աւետիս Զաքարեան, Ենովք Զուլալեան:*
*Հասցէ Հող. թեան* 854 Washington St.,
Boston, Mass.

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՔԷՅՄՊՐԻՃԻ

*Ղազար Տ. Մանուէլեան՝ Ա. Ատենապետ, Բենիամին Թերճանեան՝ Ա. Ատենադպիր, Յովակիմ Մազմանեան՝ Բ. Ատենապետ, Ապտալ Պօղոսեան՝ Գանձապետ, Աւագ Աւագեան:*
*Հասցէ Հող. թեան՝* 894 Mass. Ave.
Cambridge, Mass.

## ՉԸԼՍԻԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Հասցէ Հող. թեան՝* 18 Fifth St. Chelsea,
Mass.

*Կարապետ Պաղտասարեան՝ Ատենապետ, Յովսէփ Նէշիկեան՝ Ատենադպիր, Երուանդ Մըսըրլեան՝ Գանձապետ, Եղիա Սարգիսեան՝ Խորհրդական, Բարսեղ Վարդանեան՝ Խորհրդական:*

## ՈՒՕԹՐԹԱՈՒՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Լեւոն Նայեան՝ Ատենապետ, Թադէոս Մանուկեան՝ Ատենադպիր, Պաղտասար Հրաք-*



*եան՝ Գանձապետ, Տօնապետ Պօղոսեան, Նշան Տ. Պետրոսեան:*
*Հասցէ Հող. թեան՝* 585 Mt. Auburn St.,
E. Watertown, Mass.

## ՊՐԻՃՈՒՕԹԸՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

*Խաչատուր Վարդապետեան՝ Ատենապետ, Հայկ Սեդրոսեան՝ Ատենադպիր, Մարտիրոս Դաւիթեան՝ Գանձապետ, Ասքանազ Տ. Դաւիթեան, Գէորգ Մուրատեան:*
*Հասցէ Հող. թեան՝* 57 Broad St.,
Bridgewater, Mass.

1921 *Յունվ.* 1— *Օգոստոսէ վերջ Պոստոնի Թեմին մէջ կատարուած է* 39 *մկրտութիւն,* 23*ը մանչ,* 16*ը աղջիկ,* 108 *պսակադրութիւն,* 12 *մահ:*

ԾԱՆՕԹ.— Մնացեալ թեմերը թէեւ Հոգաբարձութիւններ ունին, բայց իրենց ցանկերը չեն հասցուցած:

—o—

*Որպէս մարակ ձիոյ եւ խթան իշոյ, նոյնպէս*
*եւ գաւազան ազգի անմտի:*
*Մի՛ տար պատասխանի անզգամի ըստ նորա*
*անզգամութեանն, զի մի՛ լինիցիս նմա-*
*նող նմա: Այլ տուր նմա պատասխանի*
*անզգամութեան նորա, զի մի՛ իմաստ-*
*նագոյն երեւեսցի յանձն իւր:*

## ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԱՏԵՆ

### Ա.

*ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ անունը յատուկ հանդիսաւորութեամբ մը կը յիշատակուի* Եւս առաւել *բանաձեւին մէջ, եւ յետոյ՝ Թեմակալ կամ Վիճակաւոր Եկեղեցականին անունը։*

*Այս յիշատակութիւնը կանոնադրական հրահանգ մըն է այդ յիշատակելիներու համար, եւ հետեւաբար բացի եկեղեցական պաշտօնատարներէ, ուրիշ յիշատակութիւններ ընել* Եւս առաւելի *մէջ, հակառակ է կանոնի։*

*Իսկ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին ուղղակի իշխանութեան ներքեւ գտնուող թեմերէն եւ Վիճակներուն, որոնց կարգին նաեւ Ամերիկայի Եկեղեցեաց մէջ՝ յիշատակութեան ձեւն է հետեւեալը.*

—«Եւս առաւել զԵպիսկոպոսապետն մեր եւ զպատուական Հայրապետն Ամենայն Հայոց զՏէր ԳԷՈՐԳ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ. եւ զԱռաջնորդն Ամերիկայի Հայոց զՏէր Տիրայր Սրբազան Եպիսկոպոսն, շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ»։

*Իսկ Սարկաւագներ պիտի յիշատակեն հետեւեալ ձեւով.*

—«Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ, Տէ՛ր Աստուած մեր, վասն Սուրբ եւ Անմահ Պատարագիս որ ի վերայ



սրբոյ սեղանոյս· զի սա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցէ։

Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, Սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ Եպիսկոպոսաց·

Եպիսկոպոսապետին մերոյ եւ պատուական Հայրապետին Ամենայն Հայոց ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ·

Եւ Ամերիկայի Հայոց առաջնորդին Տեառն Տիրայր Սրբազան Եպիսկոպոսին·

Եւ Քահանայիս, որ զՊատարագս մատուցանէ·

Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց Քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից, եւ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ։

Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց։

Եւս առաւել՝ վասն հանգուցեալ բաբունապետացն մերոց եւ շինողաց սրբոյ Եկեղեցւոյս։

Ազատութի՛ն՝ եղբարց մերոց գերելոց, եւ շնո՛րհ՝ առաջիկայ ժողովրդեանս, հանգի՛ստ՝ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն·

Եղիցի յիշատակ ի Սուրբ Պատարագս, աղաչեմք»։

## Բ.

## ՑԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Պէտք է որ Հայաստանի Հանրապետութիւնն ալ յիշատակուի Հայաստանեայց Եկեղեցւոյ Պաշտամանց եւ Պատարագներուն մէջ:

Դարերէ ի վեր մեր Ազգը աղօթած է իր քաղաքական ազատութեան համար, եւ յիշած էր իր հրապարակային և առանձնական պաշտամանց և աղօթից մէջ իր թագաւորութիւնը, իր թագաւորները, իր զօրքերը, իր զօրավարները, իր իշխաններն ու վարիչները, եւ Հոգեւոր իշխանութիւնը բարեմաղթութիւններ ըրած է Երկրին աշխարհական կամ քաղաքական եւ զինուորական իշխանութեանց խաղաղութեան, շինութեան, զարգացման և յառաջդիմութեան համար:

Բայց այս աղօթքներու, այս մաղթանքներու, այս մասնաւոր եւ հանդիսաւոր յիշատակութեանց հոգեւոր հիմը միակողմանի չէ. այսինքն՝ աղօթողներ եւ աղօթուողներ, յիշատակողներ եւ յիշատակուողներ փոխադարձաբար եւ հաւասարապէս ուժաւորուած պիտի ըլլան հաւատքով, աղօթքի մաքուր ոգւով, բարեպաշտութեամբ եւ անվերապահ յարգանքով:

Այս աղօթքներն ու յիշատակութիւնները կամայական չեն: Մեր Եկեղեցւոյն ժամակարգութեան մէջ շատ որոշ են այս աղօթից



եւ յիշատակութեանց տեղերը: Հետեւաբար թէ՛ եկեղեցականներուն եւ թէ՛ ժողովրդեան պարտքն է ուշադրութիւն ընել այդ տեղերուն, եւ հաւատքով, յուսով եւ սիրով վերակենդանացնել ու վերանորոգել մեր ազգային յիշատակութեան ձեւերն ու ենթակաները:

Այս տեղ կը նշանակենք զանոնք, որպէս զի վերջ տրուի անկանոն եւ կամայական փորձերու Ամերիկայի Հայոց Եկեղեցիներու մէջ:

Ա.— Ս. Պատարագի առեն՝ «Գոհութիւն եւ փառաբանութիւն» Քարոզին մէջ, որ բարձրաձայն կ'ըսուի Սարկաւագաց կողմէն, եւ որ վերեւ դրուեցաւ արդէն՝ Նաեւ առաւելէն ետքը:

Բ.— Որ օրհնեա զայնոսիկ աղօթքի վերջին մասին մէջ Պատարագիչը, առանց խանգարելու աղօթքին յօրինուածքը, կրնայ պատշաճօրէն ըսել.

...«Զխաղաղութիւն պարգեւեա ամենայն աշխարհի, Եկեղեցեաց, Քահանայից, Թագաւորաց Քրիստոնէից եւ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ եւ զինուորեալ մանկանց նոցա եւ ամենայն ժողովրդեանն»:

Գ.— «Ասասցուք» Քարոզին վեցերորդ տան մէջ.

«Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, եւ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ, զօրավարաց եւ զօրաց նոցին զՏէր աղաչեսցուք»:

Կ'արժէ եւ պէտք է, որ Հայ ժողովուրդը

կանուխ գայ Եկեղեցի, եւ այս սքանչելի. «ԱՍԱՍՑՈՒՔ ԱՄԵՆԵՔԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ» կոչին անձամբ պատասխանէ ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ՛ ըսելով եւ ձայնակցելով երգեցող խմբին: Ամբողջ եկեղեցին պիտի ոգեւորուի՝ երբ ժողովուրդը գիտնայ ստանձնել եւ կատարել իր բաժինը ժամերգութեան մէջ:

Դ.— Անդաստանի օրհնութեան առեն.

—«Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի Արեւմտեան կողմն աշխարհիս եւ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ. *այս նշանաւ Սուրբ Խաչիս, եւն.*»:

Անդաստանը մեր Ազգին համար զուտ քնաշխարհային օրհնութիւն մըն է, եւ արտայայտութիւն կիլիկիոյ եկեղեցւոյն: Եւ որովհետեւ Կիլիկեան Թագաւորութիւնը հաստատուած էր Հայաստանի ԱՐԵՒՄՏԵԱՆ կողմը, քնագրին մէջ անշուշտ «ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» էր բուն ձեւը, փոխանակ «ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ»ի: Առանց նկատի առնելու աշխարհագրական կողմը, կրնանք աղօթել ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ համար եւ օրհնել զայն աշխարհի ամէն կողմէն եւ Ամերիկայէն ալ:

—o—

*Սկիզբն իմաստութեան, երկիւղ Տեառն:*
*Կործանումն արանց անօրինաց չա՛ր է:*
*Ողորմութիւն եւ հաւատք ի քէն մի՛ պակասեսցեն:*
*Մի՛ յապաղեր բարի առնել կարօտելոյ՝ յորժամ ձեռնհաս իցես օգնել նմա:*



## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ
## Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ
## ՀԱՅԱՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

*ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.*

*Առ համայն Հայկազուն հոգեւոր որդիսդ Մեր, որ բնակեալ կայք ի հեռաւոր Աշխարհն Ամերիկայի՝ Ձեզ Գերաշնորհ Եպիսկոպոսացդ, Բարձրապատիւ Վարդապետացդ, Արժանապատիւ Քահանայիցդ, յարգելի անդամոց Երեսփոխանական Ժողովոյ տեղւոյդ, Մեծարելի Հոգաբարձուացդ Եկեղեցեաց եւ Աղօթատանց մերոց, եւ համայն Սիրելեացդ արանց, կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսանաց եւ ամենայն չափու եւ հասակի ի Քրիստոս հաւատացելոց, Ողջոյն եւ Օրհնութիւն յԱթոռակալէս Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Առաքելապանծ Հայրապետի եւ Լուսաւորչի Հայաստան աշխարհիս եւ ի Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսէ հանուրց Հայկազանց:*

*Շնորհք, Սէր եւ Աստուածային Սրբազան Օրհնութիւն Հօրն Ամենակալի, Որդւոյն Միածնի եւ Ամենասուրբ Հոգւոյն ճշմարիտ եւ հաւանին Սրբոյ Միածնաէջ Տաճարիս*

բազմասցի ի Ձեզ առ ի կալ մնալ անդորր եւ խաղաղ ի հոգի եւ ի մարմին:

Եւ ընդ տիրապարգեւ ողջունիս եւ Հայրապետական Օրհնութեանս յայտ առնեմք Ձեզ Սիրելեացդ ամենեցուն, եթէ ընկալեալ Մեր զգիր Երեսփոխանական Ժողովոյ ընդ ձեռն Առաջնորդին Երեւանայ Գեր. Տ. Խորէն Եպիսկոպոսի, հաւաստի եղաք զբազմանց Ժողովոյն զխաղաղ եւ զշինարարական աշխատանաց եւ ջանից, որք լուեալ զՀայրականն Մեր բարբառ միացեալ կայք եւ ի բաց վտարեալ ի Ձէնջ զամենայն վէճս եւ զպառակտումնս եւ զտարաձայնութիւնս եւ ի մի սիրտ եւ հոգի վախճան տուեալ կայք անկերպարան գործոյն Թեմիդ, ընտրելով զՄիաբան Մայր Աթոռոյս զՏ. Տիրայր Եպիսկոպոս Առաջնորդ Ձեզ եւ Տեսուչ Եկեղեցեաց կողմանցդ: Սոյնն Ընդհանրական Կոնդակով Մերով Հայրապետականաւ հաստատելով զԸնտրեալ Առաջնորդն Վիճակիդ Հայոց Ամերիկայի, պատուիրեցաք նմա տալ Ձեզ բանիւ բերանոյ զողջոյն Մեր Հայրապետական:

Հարկ Հայրական եւ պարտիք Հայրապետական համարեմք յուշ առնել Ձեզ յաւիտենական խրատ քաղցրալուրն Փրկչին տիեզերաց առ աշակերտսն իւր, «Սիրեցէք զմիմեանս». զի ո՛ւր սէր է, անդ եւ միութիւն, եւ ո՛ւր միութիւն, անդանօր եւ Աստուած, եւ ո՛ւր Աստուած, անդ եւ խաղաղութիւն, յաջողութիւն եւ երջանկութիւն:

Ընդ Փրկչական սիրոյն պատուիրեմք լինել Ձեզ եւ Եկեղեցասէրս և Հայրենասէրս:



Գիտէք քաջ, եթէ ո՛րքան մեծ է կրթող ազդեցութիւն Կրօնի եւ Եկեղեցւոյ Սրբոյ ի վերայ մարդկային կենցաղոյս, մաքրելով զմարդն հոգեպէս, բարոյապէս եւ հաւասար զնա վերնոցն առնելով: «Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն աշխարհիս», ասէ քնարն քաղցրախօս Աւարայրի Սուրբն Եղիշէ, «եւ այնպէս աներկիւղ առնէ զմարդիկ իբրեւ զանմարմին զօրս Հրեշտակաց», իսկ ընդհակառակն, «Որոց ոգիքն թուլացեալք են յերկնաւոր առաքինութենէ, յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ, յամենայն իրաց շարժի, եւ յամենայն հողմոց տատանի, այնպիսին ողորմելի է ի կեանս իւր», յարէ նոյն Հոգեկիրն:

Սիրելիք, չիք առանց հաւատոյ եւ կրօնի ո՛չ հայրենասիրութիւն եւ ո՛չ ազգասիրութիւն. յիշեցէք զհարս զառաջինս եւ զիշխանս պանծալիս Հայրենեաց Հայոց, որոց որչափ սիրելի էր Հայրենի Երկիրն, այնչափ եւ առաւել եւս Մայրենի Եկեղեցին: Իսկ Մեք յուշ առնեմք Ձեզ զպատուական եւ ազատ Հայրենեաց Մերոց, որ թուեալ կայ արդէն ի թիւս ազատ պետութեանց եւ աշխարհաց աշխարհիս, յուշ առնեմք Ձեզ եւ զազատութենէ Եկեղեցւոյ Մերոյ յատարացն խնամակալութենէ, ազատ է Եկեղեցին Հայոց եւ արձակեալ են կաշկանդեալ ձեռք Հայրապետին Հայոց: Ո՛ տայր ինձ զթեւս արծւոյ, զի թռչէի սաւառնացեալ եւ կտրելով զանհուն տարածութիւն հեռաւոր ծովու եւ ցամաքի, եւ առ Ձեզ հասանելով կենդանի բար-

րառով խօսէի եւ մխիթարէի. այլ աւա՜ղ, զի ոչ բանութիւն, այլ ընութիւն ծանրացեալ կայ ի վերայ իմ եւ ծերութիւն տայ զգալ զինքն: Ապա ուրեմն փոխանակ լեզուիս բարբառեսցէ գրիչս: Սիրել զհայրենի աշխարհն Մեր սիրեցեալ, պատուիրեցի Ձեզ ո՛չ միայն սիրել, այլ եւ օժանդակել ըստ ամենայնի աւերեալ եւ քայքայեալ Հայրենեաց Մերոց, զի անողորմ եւ դարաւոր թշնամին քաղաքակրթութեան, լուսաւորութեան մարդկութեան՝ եւ առաւել քան զամենայն անգութ թշնամին Հայութեան, խոպառ ոչնչացոյց եւ աւերեաց զաշխարհն մեր եւ ոչ եթող քար ի քարի վերայ: Ունայնացոյց ի բնակչաց, կործանեաց զսրբավայրս, լսեցին ձայնք հովուաց ի լերանց, լսեցին երգք հնձողաց ի դաշտաց, հանգեաւ ծուխն ի շինական չէն խրճթաց, լսեցին ձայնք երգոց կուսանաց ի հովտաց, ելաց հարսն զփեսայն իւր խողխողեալ եւ փեսայն՝ զհարսն իւր առեւանգեալ:

Արդ Սիրելիք Մեր, յոյս Մօր մերոյ յարուցեալն Հայաստանի առ Ձեզ եւ ի վերայ Ձեր են. Դուք էք, որ ունիք շինել, վերականգնել, զարգացնել և չէն առնել զաշխարհս: Սատարեցէք իւրաքանչիւրդ ի ձէնջ ըստ կարողութեան, հասէք ի թիկունս նորակազմ Պետութեան Հանրապետութեան Հայոց. զի այժմ իսկ, յորժամ գրեմ զայսոսիկ ի Հայրապետանոցի իմում, լսեմ զորոտն թնդանօթի յառաջատէն Արարատի, զի դարաւոր ոսոխն այժմ իսկ զդրունս մեր բաղխէ, եւ



Հայ ժողովուրդն եւ զինուորութիւն ոգի ի բուին զաշխարհս պաշտպանէ: Մի՛ մոռանայք, զի պարտիք հայրենեաց եւ հայրենասիրութեան համահաւասար եւ ի վերայ Ձեր ծանրացեալք կան:

Հուսկ ապա եւ վերջին խրատն իմ եւ պատուէր համայնից հոգեւորականացդ եւ աշխարհականացդ, լերուք ձեռնտու եւ օժանդակ նորոգ Առաջնորդին Ձերոյ, յամենայն գործս նորա եւ ի ձեռնարկս, որք հային ի շինութիւն եւ ի բարեզարդութիւն Եկեղեցեաց, յաճումն Հայ Ուսումնարանաց եւ կրթութեան զաւակաց Ձերոց ի մէջս լեզուի եւ դրականութեան, յուսացումն Բանին Կենաց եւ Աւետարանական Քարոզութեան, ի սէր եւ ի համերաշխութիւն Ձեր եւ ի բարոյական մաքուրն կենցաղ, ոյր վասն կամք մնամք առ յաւէտ մաղթանօք՝ առ Փրկիչն մեր եւ յոյսն ամենեցունց ի Տէր Յիսուս Քրիստոս, որոյ հայցելոյ ի գլուխ Ձեր ամենեցունց զշնորհ եւ զխնամս մնամք սիրով եւ ողջունիւ առ հոգեւոր Սիրելիսդ մեր. Ամէն: Տուաւ յամի շնորհաց Փրկչին.

Ի 1920 ամի

Ի 20–երորդում աւուր

Ամսեանն Հոկտեմբերի

Եւ ըստ Տոմարի Հայոց

Ի ՌՅՀ.

րտով խօսէի եւ մխիթարէի. այլ աւա՜ղ, զի ոչ բռնութիւն, այլ բնութիւն ծանրացեալ կայ ի վերայ իմ եւ ծերութիւն տայ զգալ զինքն: Այս ուրեմն փոխանակ լեզուիս բարբառեսցէ գրիչս: Սիրել զհայրենի աշխարհն Մեր սիրեցեալ, պատուիրեցի Ձեզ ո՛չ միայն սիրել, այլ եւ օժանդակել ըստ ամենայնի աւերեալ եւ քայքայեալ Հայրենեաց Մերոց, զի անողորմ եւ դարաւոր թշնամին քաղաքակրթութեան, լուսաւորութեան մարդկութեան՝ եւ առաւել քան զամենայն անգութ թշնամին Հայութեան, իսպառ ոչնչացոյց եւ աւերեաց զաշխարհն մեր եւ ոչ եթող քար ի քարի վերայ: Ունայնացոյց ի բնակչաց, կործանեաց զորբեւայրս, լռեցին ձայնք հովուաց ի լերանց, լռեցին երգք հնձողաց ի դաշտաց, հանդերձ ծուխն ի շինական չէն խրճթաց, լռեցին ձայնք երգոց կուսանաց ի հովտաց, ելաց հարսն զփեսայն իւր խողխողեալ եւ փեսայն՝ զհարսն իւր առեւանդեալ:

Արդ Սիրելիք Մեր, յոյս Մօր մերոյ յարուցեալն Հայաստանի առ Ձեզ եւ ի վերայ Ձեր են. Դուք էք, որ ունիք շինել, վերականգնել, զարդարել եւ չէն առնել զաշխարհս: Սատարեցէք իւրաքանչիւրդ ի ձէնջ ըստ կարողութեան, հասէք ի թիկունս նորակազմ Պետութեան Հանրապետութեան Հայոց. զի այժմ իսկ, յորժամ գրեմ զայսոսիկ ի Հայրապետանոցի իմում, լսեմ զորոտն թնդանօթի յառաջատէն Արարատի, զի դարաւոր ոսոխն այժմ իսկ զդրունս մեր բաղխէ, եւ



Հայ ժողովուրդն եւ զինուորութիւն ողջ ի բոլին զաշխարհս պաշտպանէ: Մի՛ մոռանայք, զի պարտիք հայրենեաց եւ հայրենասիրութեան համահաւասար եւ ի վերայ Ձեր ծանրացեալք կան:

Հուսկ ապա եւ վերջին խրատն իմ եւ պատուէր համայնիցդ հոգեւորականացդ եւ աշխարհականացդ, լերուք ձեռնտու եւ օժանդակ նորոգ Առաջնորդին Ձերոյ, յամենայն գործս նորա եւ ի ձեռնարկս, որք հային ի շինութիւն եւ ի բարեզարդութիւն Եկեղեցեաց, յաճումն Հայ Ուսումնարանաց եւ կրթութեան զաւակաց Ձերոց ի մերս լեզուի եւ դպրականութեան, յուսացումն Բանին կենաց եւ Աւետարանական Քարոզութեան, ի սէր եւ ի համերաշխութիւն Ձեր եւ ի բարոյական մաքուրն կենցաղ, որ վասն կամք մնամք առ յաւէտ մաղթանօք՝ առ Փրկիչն մեր եւ յոյսն ամենեցունց ի Տէր Յիսուս Քրիստոս, որոյ հայցելոյ ի գլուխ Ձեր ամենեցունց զշնորհս եւ զխնամս մնամք սիրով եւ ողջունիւ առ հոգեւոր Սիրելիսդ մեր. Ամէն: Տուաւ յամի շնորհաց Փրկչին.

Ի 1920 ամի

Ի 20–երորդում աւուր

Ամսեանն Հոկտեմբերի

Եւ ըստ Տոմարի Հայոց

Ի ՌՅՀ.

Ի Հայրապետութեան Մերում

յԹ. ամի.

յԱյրարատեան Մայր Աթոռ

Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

No. 625

Ի վերայ իսկականին կայ ստորագրեալ՝

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

—o—

Մի՛ նիւթեր բարեկամի քում չարիս՝ որ յեցեալ եւ յուսացեալ իցէ ի քեզ:
Մի՛ խոտորիցիս յաջ եւ մի՛ յահեակ, դարձո՛ զոտն քո ճանապարհէ չարէ:
Մի՛ հայիր ի կին չար:
Սիրտ խոտորեալ նիւթէ զչարիս:
Լա՛ւ է իմաստութիւն քան զականս պատուականս:
Խրատ առանց յանդիմանութեան մոլար է:
Ցոր վայր մտանեն թշնամանք, անդ են եւ անարգանք:
Որոց ոչ գոյ առաջնորդութիւն՝ թօթափին իբրեւ զտերեւ:



## ՈՂՈՐՄԵՍՑԻ՛

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Պատարագիչը, սեղան ելնելէ առաջ, ատեանի մէջ տեղ բարձրաձայն կը խոստովանի իր մեղաւորութիւնը Աստուծոյ եւ բոլոր Սրբոց, ինչպէս նաեւ բոլոր ժողովրդեան առջեւ, եկեղեցական հայրեր եւ եղբայրներ ալ մէջն ըլլալով, եւ կը խնդրէ որ իր մեղաց համար թողութիւն խնդրեն Աստուծմէ:

Ս. Պատարագի սկիզբը շա՜տ յուզիչ է այսպիսի տեսարան մը:

Եւ Պատարագիչի այս խնդրանքին գոհացում տալու համար եկեղեցական մը մէջտեղ կուգայ եւ կ'ըսէ ՈՂՈՐՄԵՍՑԻՆ. բայց ուր որ Պատարագիչէն զատ եկեղեցական չկայ, այդ պարագային՝ շապիկ հագնող երգեցողներէն մէկը կ'ելլէ եւ փոխանակ ՈՂՈՐՄԵՍՑԻ ըսելու Եկեալքս ի խոստովանութիւն Քարոզը կ'ըսէ, որ ամենեւին պատասխանը չէ Պատարագչի խնդրանքին:

Ասիկա սխալ սովորութիւն մըն է, որ տարածուած է, եւ այս սխալը յառաջ եկած է այն ենթադրութենէն, թէ ՈՂՈՐՄԵՍՑԻ՛ ըսելու իրաւունքը քահանայական իշխանութիւն ունեցող Եկեղեցականին է եւ ոչ թէ աշխարհականի մը:

Բայց ասիկա մեծ շփոթութեան մը արդիւնք է պարզապէս. որովհետեւ երկու հատ ՈՂՈՐՄԵՍՑԻ կայ. մին Ժամագիրքին սկիզբը, զոր Քահանայն կ'ըսէ Խոստովանողներուն, երբ անոնք խոստովանանք ըլլալէ յե-

տոյ կ'աղաչեն Հայր Սուրբ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան· եւայլն, խօսքերով, եւ արձակում կը խնդրեն: Եւ իրօք այս ՈՂՈՐՄԵՍՑԻՆ Քահանային իրաւունքն է. որովհետեւ կ'ըսէ. «Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան, եւ հրամանաւն աստուածային՝ թէ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս», եւայլն:

Իսկ միւս ՈՂՈՐՄԵՍՑԻ'Ն, որուն վրայ է խօսքը, կը գտնուի Պատարագամատոյցի կամ Խորհրդատետրի մէջ, եւ բոլորովին տարբեր է անկէ իր խմբագրութեամբ, եւ հետեւաբար բացարձակապէս յատուկ չէ Եկեղեցականի, այնպէս որ ժողովրդեան կողմէն մէկը կրնայ ըսել զայն, երբ եկեղեցական չկայ, առանց խղճատանջ ըլլալու, թէ Եկեղեցականին կամ Քահանային իշխանութիւնը կը յափշտակէ:

Արդէն Պատարագամատոյցի մէջ յայտնի հրահանգ կայ այս մասին. այսինքն՝ երբ Պատարագիչը հրապարակաւ կը խոստովանի իր մեղաւոր ըլլալը եւ կ'աղաչէ ներկայ ժողովուրդին, որ Աստուծմէ թողութիւն խնդրեն իրեն համար, հրահանգը կ'ըսէ. Թո՛ղ մօտ գտնուողներ պատասխանեն—«Պատասխանիսցեն որք մերձն իցեն»:

Վերահաստատելու համար հարազատ ուղղութիւնն ու կերպը եւ գիտութիւն մը ընծայելու համար պաշտօնէից, հոս կը դնենք այդ ՈՂՈՐՄԵՍՑԻ'Ն, որպէս զի այսուհետեւ փոխանակ ըսելով Եկեալքս ի խոստովանութիւն ըսելու, այս ՈՂՈՐՄԵՍՑԻ'Ն ըսուի երկիւղածութեամբ, յստակ եւ հանդարտ ա-



ուղղամտութեամբ, իբրեւ արտայայտութիւնը բոլոր աղօթաւորներու կամքին, սրտին եւ խանդաղատանքին:

**Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմուս, եւ յառաջիկային փրկեսցէ զքեզ եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս, եւ հանգուսցէ զքեզ 'ի հանդերձեալ կեանն: Ամէն:**

## ՆԻՍՏՈՒԿԱՑ
## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ

Ամերիկայի Հայոց Եկեղեցիներուն մէջ շատեր չեն գիտեր, թէ ե՞րբ պէտք է ոտքի վրայ կենալ եւ ե՞րբ նստիլ, եւ կը փափաքին սորվիլ: Իսկ Ամերիկահայ նոր սերունդը բոլորովին անգիտակ է Մայրենի Եկեղեցւոյ կարգուսարքին: Այս պատճառաւ այս տեղ մատնանիշ կ'ընենք ընդհանուր սովորութիւններ եւ կանոններ, որոնց պէտք է ուշադիր ըլլալ սիրով եւ յարգանքով, որպէս զի պահուի սրբավայրին պատկառանքը:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ա.— Որոշեալ ժամուն ներկայ գտնուեցէ՛ք եկեղեցւոյ մէջ, որպէս զի ժամերգութիւնը չերկարի սպասելով ժողովուրդի գալուն:

Բ.— Մի՛ հաւաքուիք Եկեղեցւոյ դրան առջեւ եւ փողոցի վրայ՝ ծխելու, խօսակցելու եւ տեսակցելու համար: Ասիկա ամենէն ամօթալի երեւոյթ մըն է, որ տեղի կ'ունենայ Կիրակի օրեր Ամերիկայի Հայոց սրբավայրերուն դուռը, երբ ներսը ժամ պատարագ կ'ըլլայ:

Գ.— Մի՛ հաւաքուիք Եկեղեցւոյ ներսը, դրան քով, գաւիթին եւ անցքին մէջ: Ասիկա ալ տգեղ եւ ամօթալի սովորութիւն մըն է, որ պէտք է վերջ գտնէ: Երբ Եկեղեցի կու գաք, ուղղակի մտէք ներս, նստեցէք ձեր տեղերը եւ մի՛ կենաք այդ անցքերու վրայ:

Դ.— Երբ բռնած էք ձեր տեղերը Եկեղեցւոյ մէջ, պատկառանքով կեցէք, ուշադրութեամբ հետեւեցէք ժամերգութեան, աղօթեցէք, եւ մի՛ խօսակցիք իրարու հետ:

Ե.— Ձեր ուզած ատեն մի՛ ելնէք Եկեղեցիէն, այլ սպասեցէք, եթէ հարկեցուցիչ պատճառ մը չունիք, մինչեւ որ ժամերգութիւնը աւարտի:

Զ.— Մայրեր պէտք չէ որ եկեղեցի բերեն իրենց գիրկը՝ լալկան պզտիկներ եւ անհանդարտ տղաքներ: Փոքրիկները եկեղեցի բերել լա՛ւ սովորութիւն է, պայմանաւ, որ կարող ըլլաք հսկել անոնց վրայ, որպէս զի չխաղան, չխօսակցին, չաղմըկեն, եւ խելօք խելօք նստին իրենց ծնողաց մօտ:

Է.— Եկեղեցի եկէք վրայ գլուխ մաքուր վիճակի մէջ, եւ ջանք ըրէք որ Եկեղեցւոյ մէջ հազի եւ ասոր պէս արտաքոյ ձայներ չլսուին:

Ը. Երբ ձեր նուէրները հաւաքեն, մի՛ սպասցնէք, դրամ մի՛ մանրէք. այլ Եկեղեցի գալէ առաջ ձեր նուէրներն ալ պատրաստեցէք, որ ժամավաճառութիւն, անպատեհութիւն եւ աղմուկ տեղի չունենան ձեր նուէրները հաւաքելու ատեն:

—o—

Քանի որ Ամերիկայի մէջ եկեղեցիներ հաստատուն նստարաններով կահաւորուած են, երկրպագութեան ձեւերու մէջ ինքնին մտած են ինչ ինչ բարեփոխութիւններ: Զոր օրինակ, այս պայմաններու մէջ կարելի չէ ծնրադրութեամբ աղօթել, ծնկաչոք նստիլ, եւ այլն:

Ուրեմն, երբ Եկեղեցի կը մտնէք՝ բացէք ձեր գլուխը, դացէք կայնեցէք ձեր տեղերը, առանց աղմուկի եւ համշտուկի, եւ ոտքի վրայ ըսէք ձեր Հայր մերը եւ ուրիշ աղօթքները, լուռ կերպով եւ երկիւղածութեամբ. և ապա հետեւեցէք ժամերգութեան՝ լարուած ուշադրութեամբ: Իսկ նիստ ու կացի համար միայն պահեցէք սա՛ կէտերը.

Ա.— Բոլոր աղօթքներու ատեն պէտք է ոտքի ելնել: Երբ Քահանայն դասի մէջ՝ կու գայ Խորանի առջեւ եւ Աղօթք կը կարդայ, ատենք են Աղօթքներու ատենը: Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ նստուկ չեն աղօթեր: Ասիկա ընդհանուր կանոն է:

Բ.— Սուրբ Աւետարանի ընթերցման ատեն պէտք է ոտքի ելնել: Արդէն Սարկաւագը կը ձայնէ Օրթի եւ Պռօսխումէ, որոնք յունարէն են, ատով ժողովուրդը կը հրաւիրէ, որ ոտքի ելնէ եւ ուշադրութիւն ընծայէ Սուրբ Աւետարանի խօսքերուն և պատգամներուն: Այս ալ ընդհանուր կանոն է:

Գ.— Փառաբանութեանց եւ հաւատքի դաւանութեանց ատեն ընդհանուր կանոն է ոտքի վրայ կենալ: Այսպէս՝ Փառք ի բարձունսի— Սուրբ Աստուածի, Հաւատամքի եւ Կեցո՛ի ժամանակները պէտք է ոտքի վրայ կենալ:

Ամէն նոր եկեղեցի եկողի վրայ պէտք չէ ուշադրութիւն դարձնել, նայիլ, տեսնելու համար թէ երբ եւ ուր պիտի նստի նա: Պէտք է վերջ տրուի այս անպատեհ սովորութեան, ատով նոր եկողը շատ աւելի դրաւիչ իրո—



ղութիւն մը կը դառնայ քան եկեղեցական Ս. խորհուրդն ու արարողութիւնը:

Եթէ խնամոտ ուշադրութիւն մը ընծայուի այս կէտերուն, ամէն ինչ կանոնաւոր կ'երթայ Եկեղեցւոյ մէջ, եւ ոեւէ շուարում կամ շփոթութիւն տեղի չունենար մտքերու մէջ, ինչպէս նաեւ ժամերգութեան ընթացքին:

—o—

Ի մեծութենէ վատք կարօտ լինին. իսկ որ
ժիրքն են՝ հաստատին մեծութեամբ:
Իբրեւ գինդ ոսկի ի քիթ խոզի, այնպէս կնոջ
չարաբարոյի գեղեցկութիւն:
Ամենայն անձն օրհնեալ՝ պարզամիտ է, եւ
այր բարկացող՝ տգեղ է կերպարանօք:
Յոր կողմ եւ դարձցի ամպարիշտն՝ եղծանի.
տունք արդարոց յերկարեսցին:
Որ ախորժէ զգինեաց գեղերանս, թողցէ ի
բնակութիւնս իւր զանարգանս:
Վկայ անօրինաց նենգաւոր է:
Ձեռն ընտրելոց գլխաւոր յաղթեսցէ. նենգա-
ւորք մատնեսցին ի յափշտակութիւն:
Զմեղաւորս հալածեն չարիք, արդարոց հաս-
ցեն բարութիւնք:
Ի ճանապարհս արդարութեան կեանք, ճա-
նապարհք ոխակալաց մահ:
Իմաստուն կանայք՝ շինեցին տունս, իսկ ան-
զգամքն ձեռօք իւրեանց կործանեցին:
Ամենայն ինչ հակառակ է անզգամի, զէն հան-
ճարոյ շրթունք իմաստունք:
Ցեց ոսկերաց՝ սիրտ հոգած:

## *ՊԱՏԱՐԱԳԻ ԱՏԵՆ*

Պէ՛տք է ոտքի վրայ ըլլալ

*Ա.— Երբ Պատարագիչը ներս կուգայ գլխատուրուած: —Ասիկա յարգանքի արտայայտութիւն մըն է ժողովուրդի կողմէն:*

Պէ՛տք է ոտքի վրայ ըլլալ

*Բ.— Թափօրի ատեն, եւ յանկայս աղօթել եւ հետեւիլ Պատարագի մինչեւ որ Գիրք կարդալու ժամը հասնի:*

*Գիրքի, եւ յետոյ Ծանուցումի եւ Քարոզի ատեն պէտք է նստած ըլլալ:*

Պէ՛տք է ոտքի վրայ ըլլալ

*Գ.— Ս. Աւետարանի ընթերցման ատեն, մինչեւ որ Սարկաւագը աղաղակէ* Մի՛ոք յերկնայից: *Այս միջոցին պէտք է նստիլ մինչեւ որ Վերաբերումը կատարուի:*

Պէ՛տք է ոտքի վրայ ըլլալ

*Դ.—* Ողջոյնի *առթիւ, մինչեւ որ Սարկաւագներ անցնին Սեղանին աջ կողմը եւ սկսին յիշատակութեանց. այսինքն՝ մինչեւ* Առաքելոց: *Նստիլ յիշատակութեանց ամբողջ ընթացքին:*

Պէ՛տք է ոտքի վրայ ըլլալ

*Ե.—* Հայր մերի *առթիւ, երբ Պատարագիչն կ՚ըսէ.* Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով:

*ԾԱՆՕԹ.— Քարոզը* առ հասարակ *Հայր մերէն* յառաջ կը տրուի Ամերիկայի եկեղեցեաց մէջ, հետեւելով Մայր-Աթոռոյ սովորութեան: Բայց սովորութիւն է նաեւ Քարոզը խօսիլ Պատարագին սկիզբը, Գիրքի ըն-



թերցումէն անմիջապէս ետքը: Երկու պարագային ալ՝ ժողովուրդը նստած կ՚ունկնդրէ Քարոզին:

Հայր մերէն *ետքը, երբ Պատարագիչը* խաղաղութիւն *կուտայ ժողովուրդին, եւ Սարկաւագներ կը ձայնեն* Աստուծոյ երկրպագեսցուք, *պէտք է նստիլ մինչեւ որ* Տէր ողորմեա *բանի լմննայ:*

Պէ՛տք է ոտքի վրայ ըլլալ

*Զ.— Երբ Սարկաւագներ կ՚աղաղակեն* Սաղմոս ասացէք. *մինչեւ Պատարագի աւարտումը, երբ Պատարագիչը* Օրհնեալ եղերու*քով կ՚օրհնէ ժողովուրդը եւ կ՚արձակէ:*

## *ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ*

*Աղօթող եւ հաւատացեալ ժողովրդեան պարտքն է գիտակցութեամբ եւ երկիւղածութեամբ հետեւիլ ժամերգութեան եւ մասնակցիլ անոր՝ միաձայն եւ ներդաշնակ կերպով:*

*Սաղմոսերգութեանց մեծ մասը, Շնորհալւոյն երգերը, մա՛նաւանդ* Յիշեսցուք, Առաւօտ լուսոյ, Նորաստեղծեալ, *ինչպէս նաեւ* Փառք ի բարձունս, Սուրբ Աստուած, Տէր ողորմեա*ներ,* Հաւատամք, *եւ Պատարագի երգերը այնքան դիւրին են, եւ անոնց եղանակները այնքան ծանօթ եւ ընտանի են ականջներու, որ ժողովրդեան թէ՛ պարտքն է եւ թէ՛ իրաւունքը մասնակցիլ անոնց երգեցողութեան:*

*Ասիկա նորութիւն մը չէ՛. Ասիկա Եկեղեցւոյն վաղեմի կանոնն է։ Ժողովուրդը գործնականապէս մասնակցելու է ժամերգութեան, որպէս զի պաշտամունքը լման ըլլայ եւ հասնի իր նպատակին։*

*Զոր օրինակ, երբ Սարկաւագն կը ձայնէ ու կ'ըսէ. «Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ,* Տէր ողորմեա», *(այսինքն՝ Ամենքս ալ միաբերան ըսենք՝* Տէր ողորմեա)։ *Ժողովուրդը պէտք է ըսէ այդ* Տէր ողորմեան, *եւ ո՛չ թէ միայն մէկ կամ երկու երգեցողներ։*

## ՊՆԱԿՆԵՐ

*Եկեղեցիներու մէջ ժողովրդեան նուէրները հաւաքելու համար -մտածուած են պատշաճ եւ վայելուչ միջոցներ։ Զոր օրինակ, պնակներ կը դրուին Եկեղեցւոյ դրան մօտ, Բանկալի վրայ, եւ պնակներ կը պտըտցնեն ժողովրդեան մէջ։*

*Բանի որ ժողովրդեան պնակներու միջոցաւ տրուած նուէրները Եկեղեցւոյ հասոյթին կարեւոր մասը կը կազմեն, հարկ է որ թէ՛ նուիրատուներ եւ թէ՛ նուէրները առնողներ կամ հաւաքողներ ուշադրութիւն ընեն, որպէս զի պնակներու երեւէն ժամերգութիւն չխանգարի, աղմկոտներ անհանգիստ չըլլան եւ ժամանակ խնայուի։*

*Իւրաքանչիւր ժամուոր Եկեղեցի գալէ յառաջ թո՛ղ պատրաստէ իր նուէրները եւ Եկեղեցւոյ մէջ մանրել չտայ իր դրամը։*



*Իսկ Հոգաբարձութեանց պարտքն է պը-*
*նակները պտտցնել ժամերգութեան այն պա-*
*հերուն միայն, երբ ժողովուրդը նստած է.*
*Զոր օրինակ,* Խորհուրդ խորինի *ատեն, Ա-*
*զոր օրինակ,* Խորհուրդ խորինի *ատեն, Ա-*
Առաքելոց *ատեն։ Պէտք չէ՛ պնակ պտտցնել*
Գիրքի *եւ* Աւետարանի *ընթերցման ատեն,*
Քարոզի *միջոցին,* Վերաբերումէն *մինչեւ*
Առաքելոց։

*Երանի՜ թէ մեր ժողովուրդը որոշեալ*
*ժամանակի մէջ գար Եկեղեցի, եւ ժողովըրդ-*
*եան ամբողջական ներկայութեան ատեն*
*փոքրիկ միջոց մը տրուէր պնակներու, ինչ-*
*պէս որ կ'ըլլայ Ամերիկեան բոլոր Եկեղեցի-*
*ներու մէջ, եւ մէկ անգամէն հաւաքուէին*
*նուէրներ, եւ վերջ տղնէին դրամ հաւաքելու*
*տեղ կերպերը։*

*Սրբավայրին պատկառանքը պէտք է*
*պահուի Եկեղեցւոյ մէջ ամէն կերպով, ու*
*նուէր տալու եւ հաւաքելու գործը պէտք է*
*ըլլայ կատարեալ վայելչութեամբ։*

—o—

*Արդարութիւն զազգ բարձրացուցանէ. նուա-*
*զեցուցանեն զազգս մեղք։*
*Լաւ են կոչունք բանջարեղէնք՝ սիրով և շնոր-*
*հիւ, քան զուարակ ի մսրոյ՝ թշնամու-*
*թեամբ։*
*Ճանապարհք վատաց կցեալ են փշովք. իսկ*
*ժրացն՝ վարուք են։*
*Ցապաղեն զխորհուրդս՝ որ ոչ պատուեն*
*զխորհրդակիցս։*

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ մեր համազգային միակ կազմակերպութիւնն է եւ հաստատութիւնը, որ հայրենասիրական ներքին եւ արժէքաւոր գործեր կատարեց եւ պիտի կատարէ յաւէտ Արեւմտեան Հայոց կեանքին մէջ:

Ամէն մէկ հայ, առանց խտրութեան եկեղեցւոյ, հատուածի եւ սեռի կրնայ անդամակցիլ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻՆ, եւ այս է պատճառը, որ այսօր Ամերիկայի մէջ տասը հազարի կը հասնի ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ անդամոց թիւը:

Ամերիկայի մէջ ընդարձակ առիթ եւ պատեհութիւն կայ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ տարածելու, ընդարձակելու եւ ուժաւորելու, որպէս զի Հայը Հայով բանելու գիտակցութիւնը եւ ուղղութիւնը նկարագիր մը ըլլայ մեզ նման ցրուած եւ կտրատուած ժողովուրդի մը, որ սակայն ամէն իրաւունք ունի ապրելու իբրեւ Ազատ, Անկախ ԱԶԳ իր պետական կազմակերպութեամբ:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ կոչուած է իր համազգային եւ հայրենասիրական նկարագրով միացուցիչ ուժի աղբիւր մը ըլլալ մեր ազգային կազմակերպեալ կեանքին մէջ:

Բոլոր Հայրենասէր Հայոց համար պարտք մը պէտք է ըլլայ անդամագրուիլ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ դրամական շատ փոքրիկ յանձնառութեամբ մը:



## ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՔ

Բարեյիշատակ Մխիթար Աբբայի Միաբանութիւնը իր երկու ճիւղերով, մին Վենետիկի Ս. Ղազար կղզեակին մէջ, իսկ միւսը Վիեննայի մէջ, նուիրուած են գրչի եւ մտքի աշխատութեան:

Երկու Միաբանութիւններն ալ ունին իրենց ամսօրեայ Հանդէսը, որոնց մէջ պարբերաբար կը պարզուին իրենց գրական եւ հրատարակչական աշխատութեանց նկարագիրները՝ հայ մտաւորական կեանքի բազմադիմի խնդիրներուն շուրջ:

ԲԱԶՄԱՎԷՊ՝ Վենետիկի Մխիթարեան Հարց ամսագիրն է, որ կը մշակէ Ազգային, Բանասիրական, Գրական եւ Գիտական նիւթեր:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ՝ Վիեննայի Մխիթարեան Հարց ուսումնաթերթն է, եւ կը մշակէ հայագիտական նիւթեր:

Ամերիկահայ դրամատէրներ եւ գրողներ մեծապէս պիտի օգտուին ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ մասնագիտական նիւթերէն:

Կ'արժէ որ Ամերիկայի Հայ գաղութը հետաքրքրութեամբ ծանօթանայ այս երկու հանդէսներուն ալ, որոնք բոլորովին նոր նիւթ պիտի հայթայթեն իր մտքին եւ գեղեցիկ ու կրթիչ զանազանութիւն մը պիտի թեանց մէջ, իրենց լեզուով, իրենց ոճով եւ բերեն Ամերիկահայ Մամուլի արտադրու-

իրենց դիտելու եւ դատելու ինքնուրոյն կերպերով:

Բաժանորդ գրուեցէ՛ք այդ երկու հանդէսներուն ալ:

ԲԱԶՄԱՎԷՊԻ տարեկան բաժնեգինն է 15 փրանք կանխիկ. եւ հասցէն.

Re'daction de la Revue

**PAZMAVEB**
St. Lazare, VENISE, ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅի տարեկան բաժնեգինն է 16 փրանք կանխիկ. եւ հասցէն.

Re'daction de la Revue

**HANDES AMSPRYA**

VII|2 Mechitharistengasse, 4.

VIENNE (Autriche)

—o—

Ողորմութեամբ եւ հաւատովք սրբին մեղք· երկիւղիւ Տեառն խորշի ամենայն ոք ի չարէ:

Որչափ ի մեծութիւն հասանիցես՝ խոնարհութեան կալ զանձն քո, եւ առաջի Տեառն գտցես շնորհս:

Դադարք իմաստութեան ցանկալի են քան զոսկի. դադարք հանճարոյ՝ ցանկալի են քան զարծաթ:



ՊԵՏ ԿԱՆ ... Гос Библио...
ՀԱՍՌ-Арм С Р

Առաջնորդարանի հասցէն է

**ARMENIAN PRELACY**
**65 Laurel Street**
**Worcester, Mass.**

6857

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0153005